



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԼ. Տարի - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1935 11^{me} Année - Septembre 1935

Խմբագրական

Մի զտխնոք

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Քրիստոսի Լեցունութիւնը

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Շաբաթական տնօրէնութիւն

Շնորհաց ծովէն

Վկայութիւնս

Թ. Ա. Սփարքո

Զ. Բ. Պուտաբեան

Ա. Օ. Փափազեան

Պետրոս Պօրանեան

Կենաց տծուներէն

Քրիստոնէական ծառայութիւն

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Մանկանց սիւնակ

Կապորէ զինուորները

Յ. Բ.



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասները թէեւ ֆրանսիայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաւորներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը ինտուէն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհասներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուսէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասները երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս սրբագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա.
նասու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:
ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ասրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանի իկ

— ԲԱՅԵՆԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԲԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԲԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérant: M. le PASTEUR KALTENBACH

ԲԱՆԲԵՐ

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն.
ըէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ մէ
Անոր հանգիստը մանկեւ. խոստումըքէն որ մեզի մնացեր է,
մեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1956

ԹԻԻ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻ ՎԱԽՆԱՔ

Ինչպէս ձեր Եգիպտոսէ ելած ատենը ձեզի
հետ խօսք կապեցի, Իմ Հոգիս ձեր մէջ կը կենայ,
մի վախճաք: Անգ. Բ. 5

Անցեալ ամսուան խմբագրականը կը հաւա-
տամ թէ ամէնզ ալ ուրախութեամբ կարդացիք:
Մեր սիրելի եղբայրը իրեն տրուած իմաստու-
թիւնով մանրամասնած էր Եգեկիէլ մարգարէին
տեսիլքը որ կը կարդանք Խէ. զլխ. 3-5 համար-
ներուն մէջ, դիտելով զայն մեր ազգային հոգե-
ւոր կեանքի պատմութեան տեսակէտով, հանե-
լով անկէ յիրաւի օգտակար եւ շինիչ եզրակա-
ցութիւններ:

Վստահ ենք թէ ոեւէ անձ կամ հոգ. շարժում
այդ խորհրդածութենէն եւ ազատ արտայայտու-
թենէն ո'չ վիրաւորուեցաւ, ո'չ խրտչեցաւ ո'չ ալ
անոնց ետեւ թագնուած յետին միտք մը փնտ-
ռեց: Կրնայ ըլլալ թէ ընթերցողներէն մին կամ
միւսը ջուրերուն հեղեղին խորութիւնը այս կամ
այն դարուն կամ շարժումին պակաս յարմար-
ցնելով ուրիշ շարժման մը վերագրեց եւ թերեւս
իրաւունքով ալ: Բայց կարեւորը այն իրակա-
նութիւնն է, ինչ որ մեր սիրելի եղբայրը ներ-
կայացուցած էր. մենք ամենա ալ, — բոլոր եկե-
ղեցիներն ու եղբայրութիւնները — մէկ բանի կը
կարօտինք, Սբ. Հոգիին հեղեղին: Զայս կ'զգանք
ամէնքս ալ ու ասոր համար կը հառաչենք, ու
թէեւ ունինք Հոգիով լեցուած անհատ եղբայր-
ներ ու քոյրեր, բայց զանգուածով չենք կրնար
հասնիլ այդ յորդառատ վիճակին: Աստուծոյ ե-
կեղեցիին մէջ կան հաւատացեալներ եւ քարո-
ղիչներ, որոնք Աստուծոյ խօսքին մարգարէու-
թիւններէն կը հանեն թէ ալ ասկէ յետոյ ընդհա-
նուր արթնութեան մեծ շարժում մը տեղի չպի-
տի ունենայ. ընդհակառակն ուրիշներ կ'սպասեն

Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ աշխարհա-
ծաւալ ընդհ. բռնկումի մը եւ ատոր համար կ'ա-
ղօթեն: Այս երկու գաղափարներէն որն ալ շի-
տակ ըլլայ կրկին մեզի համար ու մեր ազգին
հոգեւոր շրջանակներուն համար հարցը նոյնը կը
մնայ եւ Ս. Հոգիի առատ այցելութեան մը մա-
սին հառաչի ձայները կը լսուին ու պիտի լըս-
ւին: Ու կը խորհիմ թէ մենք հայ հաւատաց-
եալներս ձգելու ենք վերի երկու ուղղութեանց
գաղափարները, քանզի երկուքին մէջ ալ վը-
տանգներ կան: Առաջինը վտանգի մէջ է ըսե-
լու, ուրեմն, քանի որ ընդհ. արթնութեան շար-
ժում մը տեղի պիտի չունենայ, ուստի ինչ կա-
ժէ մեր աշխատութիւնը: Իսկ միւսներուն մէջ
ալ կայ ծուլութեան վտանգը, այսինքն առանց
աշխատելու սպասել, մինչեւ որ հոգ. արթնու-
թեան մեծ ալիքները աշխարհի ոեւէ մէկ կեդրո-
նէն ծայր տան: Բայց որքա՞ն սպասելու է ձեռ-
նամած: Աստուծոյ առջեւ անկարելի եղած բան
մը չկայ. ինչ որ կը մնայ մեզի, այդ խոստում-
ները եղածին պէս առնել եւ անոնց համաձայն
քալել է: Աստուծոյ խօսքին մէջ կան խոստում-
ներ որոնք մասնաւոր ժամանակի համար եղած
են, եւ կան ոմանք որոնք մասնաւոր ժամանա-
կի մէջ ըլլալու համար մարգարէացուած են: Բայց
կան խոստումներ որոնք միշտ աժմէական են եւ
Ս. Հոգիին այցելութիւնն ալ ամէն ժամանակի
եւ ամէն ազգի համար աժմէական եղած է: Անի-
կա առանց ցեղի, ժողովուրդի, սեռի, տարիքի
տարբերութեան միշտ այցելած է ու կ'այցելէ երբ
այդ այցելութեան պայմանները լրացուած են:
«Ինչպէս ձեր Եգիպտոսէ ելած ատենը ձեզի հետ
խօսք կապեցի, Իմ Հոգիս ձեր մէջ կը մնայ»:

Ահա հաստատուն խոստում մը որ կատարուած

է դարերէ ի վեր եւ կը շարունակուի: Իրականութիւն մը որ չկրնար տարբեր հասկցուիլ: Աստուած իր կողմէն խօսք կապեց (ուխտ ըրաւ, խոստացաւ անդառնալիօրէն) մեզի հետ այն օրը երբ մեղքի Եգիպտոսէն ելանք ու այն օրէն ի վեր Ս. Հոգին մեր մէջ կը կ'ինայ: Անոր կողմէն հարկ եղած պայմանները ապահովապէս կատարուած են, կը մնայ որ մենք ալ մեր կողմէն լըջօրէն մտածենք մեր պարտականութիւնը կատարել:

Բայց այս կէտին անցնելէ առաջ հարկ կը սեպեմ մէջ բերել կէտ մը որ արդէն բաւականաչափ յստակ կ'իրադով ներկայացուած էր յօդուածին ընդհ. դիմերուն մէջ: Այն է թէ ազգային իրականութեան մէջ հոգեւոր իւրաքանչիւր շարժումէն անուրանալի շահեր երեւան եկան որոնք ներկայ սերունդին սեփականութիւնն են, որոնցմով սուրբ գետերը յորդելու համար առաջարկուած միջոցները աւելի եւս յաջողակ կրնան ըլլալ: Բացատրենք: Առաջին արթնութիւնը պարգեւեց մեզի քրիստոնէական կրօնքը եւ Ս. Գիրքը մեր մայրենի լեզուով: Երկրորդ արթնութեան շրջանին Սուրբ Գիրքը եղաւ ժողովուրդին առօրեայ կերակուրը, որմէ ամէն մարդ ինքնիրեն կրնայ ուտել ու կշտանալ: Յետակ քրիստոնէական կեանքի էութիւնը եւ ապաշխարութեան որոշ գիտութիւնը յայտնի եղաւ:

Երրորդ դարաշրջանին մէջ երեան եկաւ աւելի լոյս եւ դաւանութեան եւ անձնական փորձառութեան վրայ հիմնուած հոգեւոր կեանքի երեւոյթը Ս. Գրական եւ կեանքի գիտակից տենչանք եւ Քրիստոսի զալստեան նիւթի սերտողութիւն եւ Անոր փառաւոր յայտնութեան սպասելու պատրաստութիւն:

Ասոնք, մեզի ներկայիս ապրողներու համար ճշմարիտ փորձառական դրամագլուխ մը կը կադմեն եւ դիւրութիւն կուտան որ Աստուծոյ նպատակը մեր վրայ հաստատապէս ի գործ դրուի:

Ու եթէ մենք անտարբեր մնանք այն գեղեցիկ փորձառութիւնները գործածելու մէջ, յիշաւի մեծապէս պարտական պիտի մնանք Աստուծոյ ու Քրիստոսի եկեղեցիին եւ կորսուած մարդկութեան, որու պարտական ալ ենք:

Արդ, քանի որ այս է իրականութիւնը, ուրիմք ի՞նչ ընենք:—

Տէրը Ովսեայ Ժ. 12ի միջոցաւ մեզի կը տաւասանէ, «Ձեզի արգարութիւնով ցանեցէք ու ողորմութիւնով հնձեցէք, չմշակուած երկիրը հերկեցէք, քանզի Տէրը փնտռելու ատեն է մինչեւ ինք զայ ու ձեր վրայ արգարութիւն պիտի տեղայ»:

Ուշադրութիւն ըրէ հետեւեալ բառերուն, ցանեցէ՛ք, հնձեցէ՛ք հերկեցէ՛ք:

Այս բառերուն մէջ հրամայական շեշտ մը կայ. հրաման է մեզի շարժելու, ընելու: Այս հրամանը Տէրոջմէն է եւ ստիպողական: Քանզի երբ գործին նայինք, հոն կը տեսնենք կատարեալ ներգաշնակութիւն եւ զործակցութիւն մը Աստուծոյ եւ իր զաւակաց միջեւ:

Աստուած կեանք դրած է սերմին մէջ: Անիկա պիտի արթնցնէ սերմին մէջ գտնուած այդ սաղմը. խոստացած է նաեւ կատարելագործել անոր մէջ ծրարուած կեանքի զարգացման ատակ բոլոր կարողութիւնները: Բայց Աստուած զարմանալի՜ ու յաճախ զմեզ ապշեցնող յատկութիւն մը ունի: Անիկա այդ գործին մէջ իսկ Իրեն ամենակարող ձեռքին սահման մը կ'ուզէ դրնել մարդկային տկար ձեռքերու եւ տկար զործունէութեան ալ յատուկ տեղ մը տալով: Ուստի մենք ալ գործ ունինք հոն — երկրագործին պաշտօնը: Պօղոս տնկելու է, Ապօղոս ջուր տալու է (Ա. Կոր. Գ. 6): Ոմանք կը ցանեն, ուրիշներ կը հնձնեն (Յովհ. Գ. 38): Երկրագործը կանուխ կ'ելլէ, կը ջանայ, կը տքնի, կ'աշխատի, ինքն իրեն հանգիստ չտար, մինչեւ հարկ եղած բոլոր խնամքը տարուի հողին եւ անոր մէջ ձգուած սերմին: Սերմին աճումը, անոր բարգաւաճումը իր ամենօրեայ կեանքին նիւթն է: Անոր հետ կարծես կ'ապրի, անոր ամէն ճգնաժամները իր մարմինին մէջ կը կրէ: Հաւատարի՛մ երկրագործ, որ գիտէ իր պարտականութիւնը, ո՛չ անկէ դուրս կ'ելլէ, ոչ ալ զայն ուրիշին վրայ կը ձգէ: Այս լուսաբանութիւնը անոր համար է որ կան հաւատացեալներ, պաշտօնեաներ, համայնքներ, որոնք կը խորհին թէ փրկութիւնը եւ արթնութիւնը Տէրոջմէն է, հարկ է սպասել, մինչեւ որ Տէրը անձամբ իր ձեռքը երկնցնէ շարժելու եկեղեցին: Ո՛չ Տէրը անպատրաստ հողի մը չկըրնար գործածել: Անոր մէջթոտներուն մէջ այդ բանը չենք գտներ: Սերմը ձգէ հոն ուր պատրաստ հող կայ. ապառաժուտ հողին եւ ճամբաներու վրայ ցանուած սերմին պատահելիքը ծանօթ է իրեն:

Ուստի մեզ կը մնայ մեզի ինկած պատասխանատուութիւնը կատարել, անհատապէս եւ հաւաքաբար:

Յառաջիկային, եթէ Տէրը կամի, պիտի ջանամ Ձարլզ Թինիի արթնութեան մասին խօսած ճառերէն քաղել այն կարեւոր կէտերը, որոնք մեզի կրնան օգտակար ըլլալ գիտնալու եւ ընելու տեսակէտէն:

ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵՑՈՒՆՈՒԹԻՒՆԸ

.....

Քրիստոսի անձը կը ցոլացնէ երեք զբաւականներ որոնք գտնուելու են հաւատացեալներու անհատականութեանը մէջ, ինչպէս նաեւ եկեղեցիին «որ Անոր մարմինն է»:

Ա. Հոգեւորականութիւնը:

Բ երկնայինին գերակայութիւնը երկրայինին վրայ (heavenliness).

Գ. Տիեզերականութիւնը:

Մարդիկ ուղեցին Պօղոսի պատգամը ընդդէմ նկատել միւս առաքեալներու պատգամին, այդ պատեհութեամբ խժըժելու համար նաեւ ամբողջութիւնը յայտնութեան:

Ճշմարիտն, տարբերութիւնը չէ տեսակի մէջ, այլ աստիճանի մէջ, որ կը լուսաբանէ թէ ինչ է ճշմարտապէս Քրիստոսի լեցունութիւնը:

Ինչ որ բոլոր առաքեալներն ալ հաւասարապէս ունին է՝ ապաշխարութիւն, վերստին ծնունդ, մկրտութիւն, Սուրբ Հոգի, արդարութիւն, սրբութիւն, Տէրոջ վերստին գալը եւն...

Տարբերութիւնը եկեղեցւոյ խորհուրդին շուրջ է որ կը նշմարուի:

Տաաներկութեան միջոց կը մասնաւորութիւն հրեայի եւ Հեթանոսի միջեւ:

Անոնք նոյն կերպով կը քարոզեն մէկանց եւ միւսանց, բայց յաւէտ կը փորձուին զանազանելու քրիստոնեաները՝ Հրեաներուն մէջ եւ քրիստոնեաները՝ Հեթանոսներուն մէջ:

Պօղոսի համար խաչը վերջնական անհետացումը կը ներկայացնէ մէկանց եւ միւսանց, Կալ «մէկ նոր մարդ» եւ այլեւս Հրեայի եւ Յոյնի հարցին տեղ չմնար:

Ուրեմն զինք բնորոշող պատգամը կը յայտնաբերէ նոր յայտնութիւն մը երկնային բնութեան եւ տիեզերական հանգամանքին այն «եկեղեցիին որ Անոր մարմինն է»:

Գաղատացւոց թուղթով եղած փաստարկութիւնները այս երկնային բանին յայտնաբերու-

թեան գործնականացումին համար էին, որպէսզի ալ ջնջուի երկրային կազմը, յուզայականութիւնը, որ ժամանակաւոր էր:

Խիստ յատկանշական է Գաղտ. Բ. 11-14 դէպքը:

Երուսաղէի մէջ յուզայական իմաստով Յակոբոս կը վարէր ականաւոր ազդեցութիւն մը: Պետրոս հռոմայնով կեդրոնէն, կ'ազատուի այդ ազդեցութենէն, եւ Անտիոքի եկեղեցիին շփումով կը հրապուրուի զրկել այն փառաւոր ազատութիւնը որ մասն էր Քրիստոսի լեցունութեան:

Բայց ի՞նչ կը պատահի:

Երուսաղէմէն ալիքներով իմացնէ իրեն թէ ան Մայր եկեղեցւոյ ընդգրկած սահմաններէն շեղած է:

Պօղոսի տիեզերականութենէն եւ Յակոբոսի յուզականութենէն շլմորած խեղճ Պետրոս տատանութեան մատնուելով, մարդոցմէ վախճանով՝ կ'ընդգրկի այն լեցուն յայտնութենէն որուն մէջ մտած էր:

Եթէ կ'ուզենք Աստուծոյ հետ մէկդի երթալ բոլորովին, պէտք է պրծինք մարդոցմէ երբ նոյն իսկ անոնք եկեղեցւոյ սիւններն են (Գաղ. Բ. 5-6) եւ վճռապէս ըսել. —

«Ինչ ալ ըլլայ կը մերժեմ կորսնցնել Քրիստոսի լեցունութենէն» մինչեւ իսկ երբ մարդիկ դիտողութիւն ընեն թէ ես պարտաւոր եմ եղբայրները նկատի առնելու:

Պօղոսի դիրքը բացարձակ անկախութեան դիրքն է կարգուած տնօրինութեան, ամէն ձեւականութեան, ազդեցութեան եւ իշխանութեան հանդէպ որ կը բռնաբարեն կամ կը սահմանափակեն Քրիստոսի լեցունութիւնը:

Ան յօժարակամ կը բաժնուի ամէն ինչէ որ կը վայելէ մարդկային գնահատութիւնը:

Արդէն մատնանշելէ վերջ Գաղ. Բ. 2, 6, յատկապէս կը շեշտէ՝ «Աստուած մէկուն աշտուութիւն չընէր» — ինչ որ պարզապէս թուել կ'ուզէ, «որովհետեւ անոնք կերպով մը համարում կը վայելեն մարդոց կողմէ, չվայելի որ նոյն համեմատութեամբ Աստուծոյ համարումն ալ ունենան»:

Այս պարագան կը վերադրի նաեւ այսօրուան աւանդական եւ կազմակերպական քրիստոնէութեան: Օրէնք սահմանուած է եւ կարելի է շատ

մը լաւ բաներ ըսել, բայց երբ յիշուի թէ Աստուած հնարած է զայս, ու երբ ըսուելիք բոլոր լաւ բաներն ըսուին, դեռ պիտի մնայ առկա հարցումը՝ «Արդեօք հո՞ր է Աստուծոյ ըսելիքին բովանդակութիւնը, միթէ ա՞յդ է լեցունութիւնը»:

Երկրային դրութիւնները զերծ չեն կաշկանդում բանեցնելէ: Անոնք կրնան արգելք ըլլալ Աստուծոյ լեցունութեան:

Միւս առաքեալներուն քով ասոր կը հանդիպէր Պօղոս:

Երբ ան կը փափաքէր ի լոյս հանել իսկական բնութիւնը «եկեղեցիին որ Անոր մարմինն է», առաքելական կազմին անհասկացողութեանը կը բողոքէր:

Ձեռք պակսեցնէր միւս առաքեալներուն արժէքը, մենք կ'ընդունինք թէ անոնք հիմեր զերին (Յայտ. ԻԱ. 14): Բայց Պօղոս իմաստուն ճարտարապետն է, որուն պաշտօնը առաւելապէս կը վերաբերի Աստուծոյ տան վերնամասին շինութիւնը: Որովհետեւ անոր միջոցաւ զիտենք թէ եկեղեցին սիեզերական, երկնային եւ հոգեւոր օրկանիք մըն է:

Բրիտանի լեցունութիւնը մեր նպատակը պէտք է ըլլայ, եթէ զայն է որ կը փափաքինք եւ կը փափաքինք բոլոր սրտով:

Աստուած պիտի ցուցնէ մեզ թէ ուր կը զբտնուի ան: Ինչ որ կը պահանջէ մեզմէ, սա է որ մենք պատրաստ ըլլանք զործնականապէս մըտնելու Իր բոլոր խորհուրդին մէջ:

Պօղոս մեծ գին վճարեց հոգ հասնելու համար: Առաքեալները չէին կրնար հետեւիլ այս ճամբուն վրայ, եւ գրեթէ մինչեւ վերջը մինակ եղաւ: Բայց վսեմ բան մըն է մինակ ըլլալը, երբ Աստուծոյ լեցունութեան մէջ ենք:

Թ. Ա. ՍՓԱՐՔՍ

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐԲ Թ. ԳԼՈՒԽ 9

Մոնիքայի առաքինութիւնները

Համեստութեամբ եւ իմաստութիւնով կըրթուած, աւելի Բեզմով իր ծնողած հպատակած քան

թէ անոնցմէ Բեզի հնազանդած՝ հազիւ Հափահաւ, յանձնուեցաւ մարդու մը որուն ծառայեց իբրեւ տէրջ մը: Նախանձախնդիր զայն Բու Հահերուդ վաստակելու, զԲեզ անոր փաստելու համար իր առաքինութիւններէն զատ ուրիշ լեզու չգործածեց: Եւ Դուն զայն գեղեցկացուցիր այն գեղովը, որ իրեն շահեցաւ իր ամուսնոյն հիացումը եւ յարգալից սէրը: Անոր անհաւատարմութիւնները այնքան համբերութեամբ կրեց որ այս խնդրոյն պատճառաւ բնաւ ամպ մը չի նկատ իրենց միջեւ: Նէ կ'սպասէր որ Բու ողորմութեանդ հաւատքին հետ ժողովալութիւնն ալ տար անոր:

...Երբ քաղաքին մի քանի կիները, ամուսնացած բաղդատաբար աւելի քաղցրաբարոյ մարդոց հետ, իրենց դէմքերուն վրայ կրելով ընտանեկան դժնեութեանց նշաններ, կ'ամբաստանէին իրենց ամուսիններուն վարքը, մտերիմ խօսակցութեանց ընթացքին, մայրս անոնց լեզուն ամբաստանելով, զրուսթօրէն սա լուր խորհուրդը կուտար թէ, այն ժամանակէն ի վեր որ իրենց ամուսնական պայմանադրութիւնը կարդացուած է իրենց, պէտք էր նկատէին զայն իբր իրենց գերութեան վաւերաթուղթը, եւ յիշելով իրենց վիճակը, պարտէին զսպել իրենց տէրերուն դէմ եղած ըմբոստութիւնը: Եւ այդ կիները որոնք գիտէին Փաթրիքիւսի (Օգոստինոսի հօրը) բուն բնաւորութիւնը, չէին կրնար բաւական զարմանքով չյայտնել թէ ինչպէ՞ս չէին լսած որ ան իր կնոջ զարկածէր, կամ թէ անոնց միաբանութիւնը օր մ'իսկ ընդմիջուած չէր, ու մօրմէս զաղտնիքին բացատրութիւնը կը խնդրէին: Նա կը սորվեցնէր անոնց իր ապրելակերպը, որուն վրայ խօսեցայ: Զայս փորձողները շնորհաւորութիւն առիթ կ'ունենային, մինչ մէկզի ձգողները կը մնային գերութեան եւ ճշունակի տակ:

Սկիզբէն իր կեսուր մայրը, անոր դէմ նախապաշարուած էր գերիներու նենգամիտ ահաբեկութեանց պատճառաւ, բայց անխոնջ համբերութեամբ, քաղցրութեամբ եւ յարգանքով նախափութելէ յետոյ, ինքն իր բերնով, իր սրբուոյն մատնանշեց ընտանիքին խաղաղութիւնը վրդովող այդ թունալից լեզուները եւ անոնց պատժուիլը խնդրեց: Ան միաբանութեան եւ ընտանեկան շահերուն սիրոյն ընդառաջ գնաց այս փափաքին եւ մօրը ուղածին պէս պատժեց յանցաւորները: Եւ մեծ մայրս նոյն վարձքը խոստացաւ բոլոր անոնց որոնք իր որդւոյն հաճելի ըլլալու համար պիտի բամբասէին իր հարսը: Այս դասը յուսահատեցուց զրպարտու-

Պիւնները եւ անկէ ի վեր ապրեցան ամենասիրալիր բարեացակամութեան մթնոլորտին մէջ(1):

...Մայրս նաեւ Քու ծառաներուդ աղախինն էր: Այն բոլորը որոնց ծանօթ էր, Քեզ կ'օրհնէին, Քեզ կը փառաւորէին եւ գրեզ կը սիրէին իր մէջ, վասնզի Քու ներկայութիւնդ կը զգային իր սրբտին մէջ, որ յայտնուած էր իր սուրբ կեանքին պտուղներովը: Մէկ ամ. ւսնի կին եղած, ծնողաց հանգէպ իր երախտագիտութիւնը յայտնած, ընտանիքը բարեպաշտօրէն կառավարած ու իր բարի գործերը կը վկայէին իրեն համար: Իր անուցած որդիները այնքան անզամներ կրկին կը ծնէր, որքան որ անոնց Քեզմէ հեռանալը կը տեսնէր:

ԳԼՈՒԽ Ժ

Մոնիքայի տեսակցութիւնը իր որդւոյն հետ, յախտնաւան կեանքի երջանկութեան մասին

Մինչ կը մօտենար այն օրը, երբ պիտի ելլէր այս կեանքէն, օրը՝ մեզի անծանօթ բայց Քեզի յայտնի, այնպէս պատահեցաւ, եւ կը խորհիմ Քու մէկ գաղտնի կարգադրութեամբդ, որ մենք մինակ գոնուցանք, ան եւ ես կոթնած պատուհանի մը:

...Մինակ էինք, անպատմելի քաղցրութիւնով մը խօսակցելով ու մոռնալով անցեալը, լափելով ապագայի հորիզոնը, մենք մեզի կը փնտռէինք, ճշմարտութեան ներկայութեան մէջ, որ Դու ես, թէ ի՞նչ պիտի ըլլար սուրբերուն համար այդ յաւիտենական կեանքը «որ աչք չտեսաւ եւ ականջ չլսեց եւ որուն չհասնիր մարդուն սիրտը» եւ հոգիին շրթունքներովը կը փափաքէինք Քու մէջդ եղող կենաց աղբիւրին զմայլելի հոսանքին, որ պէսզի երկնային ցօղին չափովը թափանցուած մեր խորհուրդները կարենային սաւառնիլ բարձունքներու վրայ:

...Եւ դուն գիտես Տէր, որ այդ օրն իսկ երբ այսպէս կը խօսակցէինք, երբ աշխարհ իր բոլոր հրապոյրներով այնքան ցած կ'երեւէր ինծի, նա ըսաւ, «Որդեակ իմ, գալով իմ մասին ալ ոչինչ կրնայ զիս կապել այս կեանքին. հոս ի՞նչ պիտի ընեմ ես, ի՞նչ բանի համար հոս եմ դեռ. այս դարուս վրայ ունեցած բոլոր յոյսերս սպառեցան, մէկ բան մը կար որուն համար կը փափաքէի

.....

(1) Ի վերջոյ Մոնիքայ յաջողեցաւ նաեւ իր ամուսնոյն դարձին պատճառը ըլլալ:

քիչ մըն ալ այս կեանքին մէջ տնտնալ, այն ալ զքեզ կաթողիկէ քրիստոնեայ տեսնելս էր մեռնելէս առաջ: Իմ Աստուածս առատութեամբ տրուաւ զայս քանի որ կը տեսնեմ որ կ'անարգես ամէն երկրաւոր երջանկութիւն, Իրեն ծառայելու համար: Այ ես ի՞նչ կ'ընեմ հոս:

ԳԼՈՒԽ ԺԱ

Մոնիքայի վերջին խօսքերը

...Օր մը իմ բացակայութեանս, մայրական վատահոլութիւնով մը խօսած էր իմ մի քանի բարեկամներուս իր այս կեանքին վրայ ունեցած արհամարհանքին ու մահուան երջանկութեան վերայ: Հիանալով այն առաքինութեանց վրայ զորս Դուն տուած էիր կնոջ մը, կը հարցնէն թէ ինք չպիտի՞ վախնար իր մարմինը հայրենիքէն այնքան հեռու թաղելէ: «Ոչինչ հեռու է Աստուծմէ, կը պատասխանէ, եւ վախնալու բան չկայ որ դարերու վախճանին Ան չյիշէ այն տեղը ուրկէ ինծի յարութիւն առնել պիտի տայ»: Այսպէս էր որ իր հիւանդութեան իննսրորդ օրը, իր կեանքին 56րդ տարին եւ իմ 53րդ տարիս այս բարեպաշտ եւ սուրբ հոգին տեսաւ իր մարմնոյն շղթաներուն վար իյնալը:

ԳԼՈՒԽ ԺԲ

Օգոստինոսի վիշտը

Աչքերս փակեցի, ու սրտիս խորքերը կը հոսէր անեզր վիշտ մը, յորդելու մօտ արցունքի առուններով: Եւ աչքերս հոգւոյս տիրապետող հրամանին տակ յետս կը մղէին անոնց հոսանքը մինչեւ անոնց չորնալը եւ այս պայքարը կը պատուէր զիս:

...Երեւակայեցի լոգարան երթալ, սորված ըլլալով որ Յոյները կ'ըսէին թէ հոգւոյն վիշտերը կրնայ փարատել: Գացի, եւ կը խոստովանիմ Քու ողորմութեանդ ո՛վ որբերուն հայրը, թէ դուրս եկայ այնպէս ինչպէս մտեր էի, չէր յաջողած շոգիացնել սրտիս դառնութիւնը:

Ապա ննջեցի: Արթննալուս զգացի ցաւս նըւաղած էր, եւ առանձին անկողնիս մէջ վերլիշեցի Քու Ամփրոսիոսիդ գրած մէկ համարը, որոնց այնքան ճշմարիտ ըլլալը կ'զգայի:

«Ո՛վ Արարիչ Աստուած, վարիչ երկնից, որ օրուան վրայ կը նետես Լոյսի զմայլելի պատմութեանը: Գիշերուան վրայ ալ տարածէ քունի շրորհը, որպէսզի հանգիստը յոգնաբեկ անդամներս:

ըը կարողդացնէ սովորական զործերը ընելու, թեթեւցնէ հոգւոյն խոնջէնքը եւ ջախջախէ տառապանքին մտայնող լուծը»:

Եւ հետզհետէ Քու ազախիւիդ վրայ ունեցած իմ նախնի խորհուրդներուս մէջ կը մտնէի. յիշելով իր բարեպաշտ սէրը Քու վրադ, եւ իմ վերաս ունեցած իր կանխահոգ գուրգուրանքը որ յանկարծ կը պակսէր ինծի: Քու ներկայութեանդ ճաշակեցի իր վրայ եւ իրեն համար, իմ վրաս եւ ինծի համար լալու քաղցրութիւնը: Մինչեւ հոս զսպած արցունքս արձակեցի որ հոսի ուղածին պէս, ու արցունքի այս մահիճին մէջ, մխիթարուած սիրտս իր հանգիստը գտաւ լսուած ըլլալով Քեզմէ միայն եւ չէ իմ վշտիս ամբարտաւան դատաւոր մարդէ մը:

Քաղուածաբար

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ooo

(ՍԵՐՏԷ, ԱՂՕԹԷ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԷ)

ԼԱ. ՏԷՐՈՋԸ ՎՍՏԱՀԻԼ

Յոր. ԺԺ. 25: Եսայ. ԺԲ. 2: Սաղ. ԺԸ. 2: ԻԷ. 1: ՃԽԴ. 1-2: Առակ. ԺԸ. 10: Ամբ. Գ. 17-19: Յոր. ԺԳ. 15: Դան. Գ. 17: Հոով. Ը. 28, 33, 34, 37: Բ. Տիմթ. Ա. 12: Դ. 18: Եբր. Ժ. 35:

Բոլոր սրտով Տէրոջը կը վստահիս:

ԼԲ. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Ա. Թագ. ԺԵ. 22: Բ. Օր. ԺԱ. 27: Երեմ. Է. 23: Հոով. ԺԳ. 1: Եփես. Ե. 24: Կող. Գ. 18: Եփես. Զ. 1: Կող. Գ. 20, 22: Յովհ. ԺԵ. 10: Եբր. Ե. 8: Փիլ. Բ. 8, 12: Հոով. ԺԶ. 19: Գործ. Ե. 32: Եբր. ԺԱ. 8: Ղուկ. ԺԱ. 28: Տիտ. Գ. 1:

Հնազանդութիւն գիտե՛ս:

ԼԳ. ՅԱԼԹՈՒԹԻՒՆ

Ծննդ. ԼԲ. 28: Յովհ. ԺԶ. 33: Ա. Յովհ. Ե. 4, 5: Եփես. Զ. 10-15: Բ. Կոր. Բ. 14: Ա. Կոր. ԺԵ. 57: Հոով. Ը. 37: Ա. Պետ. Ե. 8, 9: Հոով. ԺԲ. 24: Ա. Յովհ. Բ. 14: Յայտ. ԺԲ. 11: Բ. 7, 11, 17, 26: Գ. 5, 12, 21: Յայտ ԻԱ. 7:

Յազթութիւն ունի՞ս:

ԼԴ. ԱՐԹՈՒՆ ԵՒ ՊԱՏՐԱՍՏ ԿԵԱՆՔ

Առակ. Ը. 34: Մատթ. ԻԴ. 42, 44: ԻԵ. 13: ԻԶ. 38, 44: Մարկ. ԺԳ. 33, 37: Ղուկ. ԺԲ. 37, 40: ԻԱ. 36: Գործ. Ի. 34: Կող. Գ. 2: Ա. Թես. Ե. 6: Ա. Պետ. Ե. 8: Յայտ. ԺԶ. 15:

Արթուն եւ պատրաստ ես:

ԼԵ. ՅԻՍՈՒՍԻ ԳԱՂՈՒՍՏԸ

Յովհ. ԺԴ. 3: Յուդա 14: Մատթ. ԻԵ. 34: Գործ. Ա. 11: Յայտ. Ա. 7: Մատթ. ԻԶ. 64: ԻԴ. 27, 30: Ղուկ. ԺԲ. 40: Փիլ. Գ. 20: Ա. Կոր. Ա. 7: Եբր. Ժ. 37: Ա. Թես. Դ. 13: Յայտ. ԻԲ. 17, 20:

Յիսուսի գալստեան պատրաստ ես:

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօստ Օպէնաս

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

=====

Անիկա ինծի պիտի կանչէ թէ, Դուն ես իմ Հայրը, իմ Աստուծո՞ւ ու փրկութեանս Վէմը:

Սաղմ. ԶԺ. 26

Ինչո՞ւ չօգտուիլ Տէրոջը ողորմութիւնովը մեզի արուած այն բազմազան միջոցներէն, որոնցմով կրնանք մեր Փրկչին անհուն սիրոյն եւ փրկուածներուն անվերջ փառաբանութիւնները տարածել մօտը եւ հեռո՞ւն, «մինչեւ աշխարհի ծայրերը»: Այս միջոցներուն զերազանցը «հոգեւոր թերթերն» են, որոնք առանց արգելքի եւ հովի արագութեամբ փրկութեան «Մեծ Աւետիսը» կը տանին երկրի ամենախաւար անկիւնները: Ես կ'ուզեմ օգտուիլ այս ուղղութեամբ «Բանբեր»ի մեզի մատուցած օրհնեալ ծառայութեանէն եւ Սբ. Հոգիին օգնութեամբ կ'ուզեմ համառօտակի պատմել բոլոր «ականջ ունեցողներուն» թէ ինչպէս Տէրը ինծի պէս անպիտան եւ անարժան արարածիս եղաւ Հայր ու Աստուած և փրկութեան Վէմ:

Ծնած եմ 1908ին, լուսաւորչական ծնողքէ, Կեսաբիոյ Լիէք գիւղին մէջ: Մեծ եղեռնին մենք ալ ընտանեօք կը գտնուէինք դէպի Տէր Զօրաբարձուող կարաւանին մէջ: Հայրս մեղացիին: Այդ տաժանակիր ճամբորդութեան ընթացքին մայրս բոլորովին ուժասպառ, ակամայօրէն թուփի մը

տակ ձգեց իմ պզտիկ եղբայրս որ հազիւ 14 ամսու կար: Քանի մը օր վերջ, գիշեր մը, չգիտեմ ինչպէս իմ միակ մխիթարութիւնս եւ զօրավիգս եղող մայրս ալ կորսնցուցի եւ ես մնացի մինակ՝ միս մինակ, առանց ոեւէ յոյսի եւ օգնականի: Օ՛հ, գէթ մանկութեանս շրջանին ծնողքս ինծի սորվեցուցած ըլլային Աստուծոյ եւ Անոր հայրական նախախնամութեան վրայով, Յիսուսի եւ Անոր ձրի փրկութեան շուրջ, գոնէ աղօթք ընել սորվեցնէին, որքա՛ն մխիթարական եւ հոգեպնդիչ պիտի ըլլար այդ ծանր եւ մութ պարագաներուն տակ: Դժբաղդաբար ոեւէ հոգեւոր դաստիարակութիւն առած չէի ծնողքէս, ձգէ որ անոնք ալ թէեւ ժամէ եւ արարողութենէ ետ չէին մնար, բայց ասով մեկտեղ սաստիկ աւանդապահ եւ աւելորդապաշտ էին եւ հոգեւոր ճշմարտութիւններէ երբեք լուր չունէին: Ի՛նչ դժբաղդութիւն էր այս, քրիստոնեայ կոչուել եւ «մեծ ու ձրի փրկութենէն» երբեք լուր չունենալ... (Նոյնը չէ՞ արդեօք, ինչպէս անցեալին, նոյնպէս ներկայիս շատերուն հոգեւոր ողբալի վիճակը, «Անուն ունին թէ կենդանի են, բայց մեռած են» Յայտ. Գ. 1:

Թէեւ Սամուէլ մանուկը Տէրը չէր ճանչնար, բայց Տէրը զայն իր անունովը կը ճանչնար: Անհուն փառք Իր սիրոյն որ թէպէտ ես ալ երբեք Տէրը չէի ճանչնար, բայց Ան զիս կը ճանչնար: Որպէս հայր զիս կը նախախնամէր ու կը հոգար, որպէս Աստուած զիս մահուան փոսերէն կ'ազատէր ու զէպի կեանք կ'առաջնորդէր, մինչեւ որ օր մըն ալ Իր Որդւոյն միջոցաւ «աւելի կեանքի հասնիմ» եւ զԱյն իմ «Փրկութեանս Աշխարհը կոչեմ»:

Այսպէս Տէրոջը հայրական ողորմութեամբը տեսանելի եւ անտեսանելի բոլոր փորձանքներէն պահպանուած Ռայեաք հասաւ: Արաբ կին մը զիս գտաւ, ճնշուած եւ յուսահատ վիճակի մէջ: Առանց խօսք մ'իսկ ըսելու զիս իր իշուն վրայ դրաւ եւ ուղղակի իրենց տունը իջեցուց: Չորս տարի այդ տան մէջ ծառայելէ վերջ՝ երբ զիւղը գոլերայի հիւանդութեամբ զարնուեցաւ եւ նոյն ատեն սաստիկ սով մըն ալ ծանրացաւ տեղիս բնակչութեան վրայ, ես ստիպուած խոյս տուի այդ գիւղէն եւ Հալէպ ապաստանեցայ: Հոս քիչ մը ժամանակ Առաջնորդարանի հայկական որբանոցը կենալէ վերջ, կարմիր խաչի միջոցով Այնթապ փոխադրուեցայ, անկէ ալ դարձեալ Պէյ-րութ վերադարձայ ուրիշ որբերու հետ եւ հուսկ ուրեմն ճէպէլ հաստատուեցայ: Հակառակ աստուածային անկասկածելի նախախնամութեան, ես այնքան տգէտ, անտարբեր, մերթ ալ թշնա-

մի էի հոգեւոր բաներու, որ երբ օր մը Այնթապի որբանոցին մէջ Ժողովրդային երգարան մը ձեռքս անցաւ, զայն պատառ պատառ ըրի, «բողոքականի գիրք է» ըսելով, վասնզի մէջը մէկ երկու հոգեւոր երգեր տեսայ: Այս արգահատելի դէպքը կը ցուցնէ թէ իրաւ «իմ մէջս ալ բարի բան մը չէր բնակեր» (Հռ. Է. 18): Աւելի տխուր եւ աւելի դատապարտելի պարագայ մը ստիպուած եմ յիշել, որուն համար կ'ամչնամ ներկայիս: Ծէպէլի որբանոցին մէջ իւրաքանչիւր որբի մէջ մէկ Աստուածաշունչ բաժնուեցաւ: Ես առանց կարգալու զայն, զաղտնի ատելութեամբ «այս ալ բողոքականի գիրք է» ըսելով մէկ կողմ շարժեցի: Ու դեռ աւելին, Սուրբ Գիրք կարդացողները «խենթ կամ մոլեռանդ» կոչելով կը ծաղրէի: Ուրիշ ամէն տեսակ չարագործութիւններէս այս մէկն է որ ամենէն աւելի ծանր կը թուի ինծի եւ յիշաւի այս խօսքը ինծի ալ կը յարմարի թէ «զուր տեղը զիս ատեցին»: Ու որոշ գիտեմ հիմա թէ այն ատեն ես ալ կը գտնուէի այն դասակարգի մարդոց մէջ, որոնց համար Տէրը ըսաւ, «Լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, քանզի իրենց գործերը չար էին» Յով. Գ. 19: Ո՛հ, ի՛նչ խղճալի էր այն ատեն իմ վիճակս...:

1923ին որբանոցէն ելայ, ժամանակ մը Պէյ-րութի մէջ աշխատելէ վերջ Ֆրանսա մեկնեցայ: Նաւուն մէջ անձանթ հոգեւոր մօտենալով հարցուց ինծի, «Երիտասարդ, դուն Տէր Յիսուսը գտա՞ծ ես»: «Դուն գտա՞ծ ես», հարցուցի իրեն բարձրաձայն քրքիչով, «Ինչպէ՞ս կրնամ Յիսուսը գտնել»: Հոգեւոր երիտասարդը առանց ոեւէ պատասխանի տրամութեամբ մէկ կողմ քաշուեցաւ: Հոս ալ անկասկած, Տէրը այդ Իր վկային միջոցով զիս Իրեն քաշել փորձեց, բայց ես չ'երթեցի անմտութեամբ:

1926 Հոկ. 24ին Մարտէյլ հաւայ եւ հոն ժամանակ մը ծանր նեղութիւն կրելէ վերջ՝ սկսայ թղթահաւաքութեամբ ապրիլ: Օր մը մինչ ես փողոցներուն մէջ թուղթ կը հաւաքէի, Օր. Վիտլման, հայախօս ֆրանսացի հոգեւոր քոյր մը, թերթիկ մը երկարեց ինծի յորդորելով որ ուշադրութեամբ կարդամ: Հետաքրքրական էր այդ թերթիկը, կրկին եւ կրկին կարդացի մինչեւ որ անոր պարունակած ճշմարտութիւնովը լուսաւորուած եւ յաղթուած Յիսուսի յանձնուեցայ:

Քիչ ժամանակ վերջ՝ Սէնթ Օպան մեկնեցայ հոն գործելու համար: Որքա՛ն ուրախացայ որ հոն քանի մը պարզուկ Աստուծոյ զաւակներ գտայ, որոնք տան մը մէջ կը հաւաքուէին աղօթելու

երգելու եւ Ս. Գիրքը սերտելու: Ես ալ անոնց միացայ, բայց այնքան տգէտ եւ երկչոտ էի հոգեւոր կեանքիս մէջ որ աղօթք ընել իսկ չէի գիտեր: Ս. գրածախ Կիւլշան եղբորմէն աղօթագիրք մը գնեցի եւ իւրաքանչիւր աղօթածոցովի մէջ այդ գրքովէս սորված գոց աղօթք մը կ'արտասանէի: Բայց այդ գրքին վերջը եկաւ (եւ աղէկ եղաւ որ այդ գիրքը վերջակէտ մը ունէր) ու ես ինքզինքս ստիպուած գտայ Աստուծոյ ազադակելու եւ ըսելու, «Տէր, ինծի աղօթք ընել սորվեցոր»: Փառք Տէրոջը որ խնդրողին «առատապէս կուտայ ու չնախատեր» (Յակ. Ա. 5) ինծի ալ իր Ս. Հոգին տուաւ ու ես իմ տկարութեանս մէջ Ս. Հոգւոյն օգնութեամբը սկսայ աղօթել, Հոով. Ը. 26-27: Ո՛հ, ի՛նչ օրհնեալ եւ անպատում շնորհք է «Հոգիով աղօթք ընելը»...

1928ին Լա Սիթիա եկայ: Փառք Տէրոջը, հոն ալ Աստուծոյ սիրելի զաւակներու խումբ մը գտայ որոնց միացաւ մեծ ցնծութիւնով: Ի պատասխան մեր աղօթքներուն եւ հառաչանքներուն, Տէրը մեզի քարոզիչ մըն ալ նուիրեց, եւ այն օրէն ի վեր՝ Աստուծոյ ողորմութիւնովը մեր եկեղեցին կազմակերպուեցաւ եւ ուրիշ անմահ հոգիներ ալ յաւիտենական կորուստէն փրկուեցան: Քարոզադո՞ւները, աղօթածոցովները եւ սերւողութեան ժողովները ինչպէս ուրիշներու, նաեւ ինծի մեծապէս օգտակար եղան եւ մեծապէս լուսաւորուեցայ: Անհուն փառք ըլլայ Հօրը սուրբ անուանը:

Իմ կինս Սիրանուշ Պօրանեանն ալ որ Փօնտ Օպէնասի մէջ ապաշխարած էր, իր լուսովը մեծապէս օգնեց ինծի հոգեւոր կեանքիս մէջ յառաջ երթալու:

Ներկայիս ես ոչ միայն ուրախութեամբ եւ Հոգւոյն Սրբոյ միաբանութեամբը եղբայրներուն հետ կ'ապրիմ, (Սաղ. ՃԼԳ) այլ անոնց հետ բոլորանուէր ջանքով կ'աշխատիմ ալ Տէրոջը սուրբ այգիին մէջ, թէ եկեղեցիին հոգեւոր շինութեան եւ թէ խեղճ մեղաւոր հոգիներ փրկութեան առաջնորդելու համար:

Մեր եկեղեցիին ամէն մէկ անդամը յատուկ գործ մը ունի ընելիք: Իմ պարտականութիւնս է ամէն կիրակի տունէ տուն երթալ եւ անապաշխար հոգիները ժողովի հրաւիրել: Այս պատճառաւ եկեղեցիին կողմէ ես կը կոչուիմ «Փողոհար»: Աղօթեցէք ինծի համար, ով սիրելի եղբայրներ որ այս պատիկ վկայութիւնս կը կարգաք, աղօթեցէք ինծի համար որ Տէրը զիս հաւատարիմ գործունեայ եւ պտղաբեր ընէ իր փառքին համար մինչեւ որ ինք գայ:

Բոլոր փառքը իրեն հիմա եւ յաւիտենական դարերուն մէջ:

Տէր Յիսուսով ձեր եղբայրը

ՊԵՏՐՈՍ ՊՕՐԱՆԵԱՆ

Լա Սիթիա

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Ապրիլայի Լուֆ — Քոյր Ապրիլայի, քանզի զինքը սովորաբար այսպէս կը կոչէին, 42 տարիքին այրի մնացած էր: Իր ազգականներուն այցելութիւն մը տալու համար Ամերիկայի քաղաքներէն մէկը գացած էր, քիչ մը ատենուան համար միայն, Տէրոջը առաջնորդութեամբ բարի գործ մը ձեռնարկելէ առաջ: Ամէն անգամ որ գործի վրայ կը խորհէր, իր մեծ եռանդն էր իր հօրը եւ ճօրճ Միւլլըրի նման ուղղակի Աստուծոյ կախումով ըլլալ իր բոլոր պէտքութիւններուն համար:

Աստուծոյ սիրոյն ու գութին վրայ երբեք չէր կասկածեր: Բայց ինքն իրեն կը հարցնէր թէ կին մը որ ոչ ամուսին, ոչ հայր եւ ոչ եղբայր ունի, կրնա՞յ ազատ գործի մը մտնել: Վստահ էր թէ Աստուած զինքը գործի մը կանչած էր, սակայն՝ հանդարտ կ'սպասէր որ Ան որոշ պէտք իր ճամբան:

Սկիզբները քանի մը ամիս իր ունեցած դրամը գործածեց ուրիշներու համար եւ թափով մը յառաջացաւ հաւատքի ուղիէն, միմիայն Աստուծոյ ձգելով ընտրելու գործին տեսակը ու իր դրամական պէտքերուն հոգը: Այսպէս առաջնորդուեցաւ այցելելու թէ տուններու եւ թէ հիւանդանոցներու մէջ գտնուած հիւանդները:

Օր մը իրմէ խնդրուեցաւ այցելել Աստուծոյ մէկ սիրելի զաւակին: Հոն պէտք էր ներս մտնէր առանց դուռը զարնելու, քանզի հիւանդը անդամալոյց մըն էր ու դուռը բանալու չէր կրնար ելլել: Երբ հոն գնաց, խօսելու ձայն մը լսեց, ու կարծելով թէ արդէն ուրիշ այցելու մը կայ, մըտիկ ըրաւ եւ լսեց հետեւեալ խօսքերը, «Ո՛վ Հայր, ինծի բարեկամուհի մը զրկէ, թող Բու ընտրածդ ըլլայ, բարեկամուհի մը որ տեսական

ու հաւատարիմ ըլլայ, ու զայն այսօր զրկէ»:

Գիտնալով որ այդ առաւօտը Տէրն էր զիս հոն զրկողը էր, ներս մտայ և իրեն ըսի, «Այո սիրելիս, Աստուած պատասխանեց ձեր աղօթքը, եւ զիս զրկեց ձեր բարեկամութիւն ըլլալու»:

— Կը հաւատամ, պատասխանեց հիւանդը, ու շնորհակալ եղաւ Աստուծոյ այս պատասխանին համար:

Եօթը տարի շարունակ շաբաթը երկու կամ երեք անգամ այցելեցի իրեն, զինքը լուալու, մազերը սանտրելու, աղօթելու, զրելու, կերակուրը պատրաստելու, սենեակը մաքրելու ու շատ ուրիշ պատիկ ծառայութիւններ ընելու: Յետոյ իր ամուսինը արկածով մը իր գործին մէջ մեռաւ ու ինք բոլորովին առանձին մնաց: Ո՛չ մէկը ունէր իրեն հոգ տանելու: Խորհեցայ թէ դիւրութեամբ իրեն ապաստանարան մը կրնամ գտնել: Բայց ցաւս մեծ եղաւ, երբ հասկցայ թէ այդ մեծ քաղաքին մէջ, այս տեսակ անձերու չկար: Անմիջապէս աղօթքի նիւթ ըրի, բայց երբեք չմտածեցի զինքը քովս առնել:

Առաւօտ մը իր մազերը սանտրած ատենս իրեն ըսի թէ «ուրիշ կերպ չեմ գտներ եթէ ոչ զինքը ուրիշ քաղաք մը զրկել: Բայց այդ բաները ըսած ատենս կարծես թէ, ձեռքի մը վրաս դրուիլը զգացի ու լսեցի ձայն մը որ ինծի կ'ըսէր «Այս Աստուծոյ զաւակը քովդ առ, այն տանը մէջ որ քեզի տուի, եւ անոր Աստուծոյ սէրն ու գութը ցուցուր»: Տունը, որուն մէջ կը կենայի, վարձու էր, միայն թէ ըրած գործերուս համար ցած գինով էր: Անմիջապէս, «Այո, Տէր, կրնամ եւ կ'ուզեմ իրեն Քու գութդ ու սէրդ ցուցնել, որ անպակաս ու անսխալ է, միայն թէ կը վախնամ թէ իմ սէրս ու դուքս կը պակսի» պատասխանեցի: Այդ ատեն ժամը տասնմէկին քառորդ կար, եւ իրիկունը ժամը վեցին, հիւանդը իմ տանս մէջ էր արգէն:

Աստուծոյ ինծի տուած այդ սիրելի պատիկ տունը աչքէ անցուցի փնտրելու համար յարմար սենեակ մը, քանզի զգացի թէ պէտք էր ամենալաւ սենեակը տալ իրեն, քանի որ Աստուած էր որ զիս կը հրաւիրէր իրեն հոգ տանիլ եւ առջևի սրահին մէջ պէտք էր դնել, բայց ո՛ւր էր անկողինը, ոչ դրամ ոչ ալ անկողին ունէի: Միայն Աստուծոյ վրայ վստահութիւն ունէի, քանի որ նա սրտիս վրայ դրած էր ամենալաւ սենեակս անոր տալ ուրախութեամբ, կը հաւատայի որ պէտք եղած դրամն ալ պիտի զրկէր: Ուստի հեռաձայնով մահճակալ մը ապապրեցի ըսելով թէ պիտի վճարէի երբ անկողինը զար:

Երբ մահճակալը տանը ետեւի դռնէն ներս կը մտցուէր, սուրհանդակը Անգլիայէն ինծի չէք մը բերաւ, որուն գումարը պէտք եղածէն աւելին էր: Անկողինը կ'արժէր երեսունըհինգ տուար, իսկ չէքը վաթսուն:

Երբ հիւանդը անկողին դնելու ժամը եկաւ, մեծ հարցում մըն էր թէ ո՞վ պիտի օգնէր ինծի զայն վերցնելու. առանձին չէի կրնար, վերջին վայրկեանին իրեն ըսի, «Եթէ Տէրը կ'ուզէ որ ես քեզ միակուս վերցնեմ, ինծի պէտք եղած գորութիւնը պիտի տայ»: Ուստի ձեռքս պէտք եղած ուղղութիւնը դնելով իրեն հարցուցի,

«Կը հաւատամ որ Տէրը ոյժ կուտայ զքեզ վերցնելու եւ անկողինդ դնելու»:

— Այո, պատասխանեց:

— Շատ լաւ, կը խորհիմ թէ վախնալու չենք, ինք մեզի ուժ պիտի տայ, իր անուանը համար պիտի ընենք: Երկնաւոր Հօրը անունով զայն վերցնել փորձելէս առաջ դուռը զարնուեցաւ, ու վրկայեալ հիւանդապահուհի մը որ հանդիստի պէտք ունէր, կուգար իմ տունս անցնելու իր վագանձը: Տէրը հոգացած էր, էւ այն օրէն ի վեր զրեթէ տասնըմէկ տարի է, երբեք օգնականներս չպակսեցան:

Ասկէ վերջ մէկէ աւելի անգամալոյծներ քովս առի: Տունը իմ չէ, Տէրոջն է, քանի որ ինք կը հրամայէ ընել ամէն ինչ, պէտք եղածներն ալ ինք կը հոգայ:

Հազիւ թէ անգամալոյծը քովս առած էի, իմ սիրտս բացուեցաւ դէպի Աստուծոյ ուրիշ կարօտ զաւակներուն, որոնք զրեթէ նոյն պարագաները ունէին: Սիրտս լսած էր Աստուծոյ մեղմ ձայնով ըսած խօսքը, «Իմ սիրելիներս քովդ առ եւ զանոնք Աստուածային սիրով զգուէ, ու ես պիտի հոգամ ամէն պէտքը: Իմ շնորհքս փերիս է քեզի»:

Շատ անգամ ինծի կը հարցնէի թէ միայն իմ եկեղեցիի՞ն զաւակները կ'առնեմ: Այդպիսի զատողութիւն մը Աստուծոյ փառք չի բերեր, միայն թէ, ես կ'առնեմ անոնք որ կը հաւատան թէ Յիսուս Աստուծոյ Որդի է, թէ Սբ. Գիրքը Աստուծոյ խօսքն է, եւ թէ մենք փրկուած ենք միմիայն Յիսուս Քրիստոսի արեանը շնորհիւ ու Անոր զարձին կ'սպասեն: Այս պատիկ գործը միմիայն հաւատացեալներուն համար է:

Բայց Տէրը զիս առաջնորդեց օգնելու տունէն դուրս շատերու որ դեռ հաւատացեալներ չէին: Ուրիշ հարցում մը որ շատ անգամ եղած է ինծի, «Օրուան պէտքերը ինչպէ՞ս կը կարգադրես»:

Կրնամ ըսել որ «եւէ օգնել կրցող մէկու մը ոչ ըսի եւ ոչ ալ դրեցի: Տէրը ինք կը հոգայ մեր

բոլոր պէտքերը: Ինքը իր զաւակներուն սրտին վրայ կը դնէ մեզի զրկելու պէտք եղածները: Մեր պարզ բնակարանը տեսնող ոչ մէկը կրնայ գիտնալ ինչ որ կը ծախսենք, բայց Տէրը ինք գիտէ ու այդ կը բաւէ: Ձեզի հաւատացեալներու հարցնեմ, Տէրը երբեք պակաս՞ է իր խոստումներուն մէջ անոնց, որ իրական իրեն վըստահած են:

Ծօրճ Միւլըր, այս Աստուծոյ մարդը որ վաթսուներկու տարուան փորձառութիւն ունէր, որ տեսէ մէկէն սու մը խնդրած չէր, հաստատապէս կը հաւատար թէ իրեն չպիտի պակսէր, ինչ որ իրաւունք ունէր խնդրելու: Շատ պզտիկ հաւակէս կ'ուզէի ընել ինչ որ ինք կ'ընէր, կը ջանայի մօտենալ Աստուծոյ ինչպէս որ ան կ'ընէր եւ երբ տեսայ այս բառերը «Ո՛վ հաւատք պիտի ունենայ ինծի հետեւելու», իմ սիրտս պատապիտանեց «Ես, Տէր»:

Այսպիսի կեանք մը ապրիլ կ'արժէ, բայց զայն ապրելու համար սիրելի ընթերցող, նախ Տէր Յիսուս Քրիստոսի արեամբ մեղքերու թողութիւն ընդունելու է մարդ. առանց մեղքերու թողութեան անկարելի է որ մարդս իր անձէն զուրս կրնայ ելլել ու ուրիշներու վրայ մտածել: Բայց իր կեանքը ուրիշներու տալու համար, Ս. Հոգիին լեցունութիւնը ունենալով՝ Անոր միջոցաւ ամէն օր Աստուծոյ անմիջական հնազանդութեան մէջ մնալու է: Այս կեանքն է սրբութեան կեանքը, փորձենք անոր մէջ քայլ նետել եւ զգալ Անոր ճշմարիտ ընկերակցութիւնը մեր բոլոր եւ մանրակրկիտ առօրեայ գործունէութեան մէջ:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՍԵՊՏ. 1.—

ՊՕՂՈՍ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԶԲԱՂԱԾ ՄԱՐԴ ՄԸ

Դաս Գ. Առաք. Ի. 33-35: Փիլ. Գ. 4-5

Կարդալ Գ. Առաք. ԻԲ. 3-10

Հաւողիկէի եկեղեցւոյն վիճակը ներկայացնող մեր օրերուն եկեղեցիները եւ անոնց մէջի հաւատացեալները Յիսուսը սիրելու մէջ զաղջ ենք

որովհետեւ աշխարհի համար շատ զբաղած ենք եւ Յիսուսի համար քիչ կամ բնաւ: Նոյնիսկ Եհովա—Յիսուսի Աստուածային արիւնովը ծախու առնուած փրկեալներս անգամ երբեմն զբաղած ենք աւելի շատ «ուտելով, խմելով, կին առնելով, էրկան տրուելով, ծախու առնելով, ծախելով, տնկելով ու շինելով» մէկ խօսքով «այս կեանքին գործառնութիւններովը» քան թէ կենաց խօսքը սերտելով, Ժամեով ծուկի վրայ ազօրեւելով, հոգիներու համար ցաւ քաշելով, վկայելով, Աստուծոյ փառքին ու գործին համար ծախք ըլլալով ու ծախք ընելով: Մէկ խօսքով ցուցնելով նիւթապաշտ եւ զբամասէր աշխարհի թէ մենք մեր հոգիին սիրածին, մեր Տէրոջ ու Փրկչին սիրովը զբաւուած ու լեցունած ենք եւ Անոր սիրովը արեցած ենք, եւ կուգինք այդպէս ալ շարունակել ու մինչեւ ի մահ մեր Փրկչին հաւատարիմ մնալ Անոր ու միմիայն Անոր համար զբաւելով: «Ամէն ինչ որ կ'ընէք, թէ խօսքով եւ թէ գործով (ուտելով ու խմելով ալ) բոլորը Տէր Յիսուսի անունովը ըրէք» (Կող. Գ. 17):

Քրիստոս Յիսուսէ բռնուած այս առաքեալին կեանքը քայլ առ քայլ «անոր նմանող ըլլալու հաստատ որոշումով սերտելով պիտի տեսնենք թէ մեր մարմնաւոր խորհուրդները, ծրագիրները, ջանքերը հոգեւորի պիտի փոխուին ու մեզի համար այլեւս պիտի չըսուի «փրկուած բայց մարմնաւոր, հապա «Տէր Յիսուս քրիստոսի անունը համար անձերնին մատնած մարդիկ» (Գ. Առաք. ԺԵ. 27): Այն ատեն մենք «առտուանց կանուխ այգիները պիտի երթանք, մեր որթը պիտի ծլի, մեր ծաղիկը պիտի բացուի, մեր նոնքները պիտի ծաղկին եւ հոն մեր սէրը մեր Փրկչին պիտի տանք» Երզնց Է. 12):

Քրիստոնէական ասպարէզի կայարաններն են. —

Մեկնակէտը՝ «Աստուծէ ծնած» (Ա. Յով. Գ. 1):

Արշալը՝ «Յիսուսի նալինք» (Եբր. ԺԲ. 2):

Վախճանը՝ «Իր մէջ գտնուիմ» (Փիլ. Գ. 9):

ՍԵՊՏ. 8.—

ԼԻՏԻԱ ԵՒ ՊՐԻՍԿԻՂԱ, ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԶԲԱՂԱԾ ԿԻՆԵՐ

Դաս Գ. Առաք. ԺԶ. 11-15: ԺԸ. 1-3, 24-28

Կարդալ Առաք. ԼԱ. 10-31

Լիտիայի անունը միայն իր ապաշխարութեան առթիւ, բայց մանրամասնութեամբ յիշուած է. իսկ Պրիսկիղայինը աւելի յաճախ եւ իր գործին հետ առնչաբար յիշուած. ուստի կարելի է այս

զասը երկու գլխաւոր մասերու բաժնել: Ա.— Լի-
տիա՝ ապաշխարութիւն, Բ.— Պրիսկիդա՝ ծառա-
յութիւն: Ա.— Գ. Առաք. ԺԶ. 11-15ի մէջ Լիտիա-
յի սրտի հետ 7 բաց բաներ կրնանք գտնել: (ա)
Բաց աւանջներ, (Հոով. Ժ. 17) «Լիտիա մտիկ կ'ը-
նէր... Պօղոսի ըսածներուն ուշադրութիւն ընե-
լու»: «Ուստի նայեցէք թէ ինչպէս կը լսէք»
Ղուկ. Ը. 18): (բ) Բաց աչքեր, որոնցմով նա իր
պակասը եւ Քրիստոսի համար ունեցած կարօտը
տեսաւ: (գ) Բաց սիրտ: Ասիկա Տէրոջը գործն էր,
երբ նա մտիկ ընելու մէջ հաւատարիմ եղաւ,
Տէրը անոր սիրտը բացաւ: Բաղդատէ «Մարիամ
...մտիկ կ'ընէր» Ղուկ. Ժ. 39): (դ) Բաց բերան, իր
հաւատքը խոստովանելու համար: (ե) Բաց խոս-
տովանութիւն նաեւ իր եւ իրեններուն մկրտուե-
լովը: (զ) Բաց տուն մը, Մարիամի նման Լիտիա
եւ իր տան դռները լայն բացաւ Տէրոջը ծառա-
ները ընդունելու (Տես նաեւ Գ. Առաք. ԺԶ. 40):
(է) Բաց քսակ, Տէրոջը ծառաները կերակրելու
«Իմ տունս մտէք քնակեցէք»:

Բ. Ծառայութիւն.— Գ. Առաք. ԺԸ. զլուխէն
ինչպէս նաեւ Հոով. ԺԶ. 3-5 եւ Ա. Կոր. ԺԶ. 19էն
կը հետեւցնենք թէ Պրիսկիդա Առաք. ԼԱ. 10-31ի
տիպար առաքինի կ'իյնէր: Նա կ'օգնէր իր ա-
մուսնոյն վրանազործութեան մէջ ու Տէրոջը Ա-
ւետարանին պաշտօնին մէջ: Կարծեմ թէ չենք
սխալիր ենթադրելով որ Պրիսկիդա ոչ թէ մի-
այն իր ամուսնին արգելք մը չէր, հապա նոյնիսկ
միջի ու զրդի պատճառ մըն էր անոր գայն աւե-
լի գործունեայ դարձնելու: Անոնք ամէն ուր որ
երթային իրենց տունը եկեղեցի կը զառնար եւ
կամ եկեղեցին իրենց տան մէջ կը հաստատ-
էին: Հակառակ իր կին մը ըլլալուն, Պրիսկիդա
իր ամուսնոյն հետ միասին իր կեանքը Պօղոսի
կեանքին համար վտանգի ենթարկած էր մաս-
նաւոր առթիւ մը: Քրիստոնէական ծառայութեան
համար ի մէջ այլոց հետեւեալ յատկութիւնները
անհրաժեշտ են որոնցմէ Պրիսկիդա անկասկած
ունէր:

Մարմինը ընծայուած կենդանի զոհ մը Աս-
տուծոյ Հով. ԺԲ. 4: Հոգեով Սրբով լեցուած Գ.
Առաք. ԺԳ. 9: Ժրջան Նզրաս է. 23: Սրտոտ
Նէմ. Դ. 6: Կարող Ա. Մնաց. Թ. 13: Բաշխարտ
Բ. Մաց. ԼԲ. 7, 8: Հաւատարիմ Յայտ. Բ. 10:
Տէրոջմով զօրացած Եփես. 2. 10: Միշտ արթուն
Նէմ. Դ. 11, 18: Ստէպ աղօթող Հով. ԺԲ. 12: Ան-
վախ. Եսայ. ԽԱ. 10: Ուրախ Փիլ. Դ. 4: Աստուծոյ
նայող Նյեմ. Դ. 20: Փառքը Աստուծոյ Գ. Առաք.
ԺԲ. 21-23:

ՍԵՊՏ. 15.—

ՏԻՄՈԹԷՈՍ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳՈՐԾԻՉ ՄԸ

Դաս Բ. Տիմ. Ա. 1-14

Կարգալ Ա. Տիմ. 2. 11-16

Տէրոջը փառք կուտանք որ մեզի ծանօթ շատ
մը տեղերու մէջ երիտասարդ գործիչներ իրենց
կեանքերը նուիրեցին Տէրոջը անուանը համար:
Բայց այսու դեռ կ'սպասենք Աստուծոյ Հոգւոյն
առատ անձրեւին: Երիտասարդներ կրնան շատ
եռանդով լեցուած ըլլալ, բայց ուրիշ պատճառ-
ներ կան որոնց պակասը կրնայ անոնց պաշտօ-
նէութիւնը անպտուղ դարձնել: Առաքեալը իր
փորձառութենէն կ'ուզէ օգտագործել երիտասարդ
Տիմոթէոսը:

Առաքելութեան նպատակը, կամ Աստուծոյ
վերին կոչումին մրձանակը «Քրիստոս Յիսուսով
կենաց խոստմունքին» շատերը մասնակից ընել
է: «Արդարին պտուղը կենաց ծառ է, ու հոգի-
ներ վաստկողը իմաստուն է» (Առաք. ԺԱ. 30):

Այս նպատակով Աստուած Տիմոթէոսին տը-
ւած էր անկեղծ հաւատք, Աստուծոյ պարգեւը
(Սուրբ Հոգւոյն լեցունութիւնը) զօրութեան, սի-
րոյ եւ զգաստութեան հոգի, Աւետարանին չար-
չարանքներուն մասնակից ըլլալու (աւելի բա-
ցառիկ, առանձնաշնորհեալ) շնորհքը (Տես. Փիլ.
Ա. 29): Ծերացած առաքեալը իր հաւատքով
«սիրելի որդիին» երիտասարդ գործիչին նոր ե-
ռանդ, խանդ ու աւելն կուտայ, սիրտ կուտայ,
կը քաջալերէ, որպէսզի նա չթուլնայ, չքնանա-
նայ, չտկարանայ, չյուսահատի: Հոգեւոր գոր-
ծունէութեան մէջ ամենէն զօրաւորը ամենէն ե-
րիտասարդը չէ, հապա իր մագերը արդարութեան
ճամբուն մէջ ճերմկցնողը: Հոս տեղն է յիշել
մարգարէին խօսքը (Եսայ. Խ. 29-31)

Արբահամ, Յակոբ, Յովսէփ (Եբր. ԺԱ. 22),
Մովսէս (Բ. Օրին. ԼԴ. 7), Յեսու (Յես. ԻԴ. 15),
Քաղէր (Յես. ԺԴ. 11-14), Դանիէլ, Պօղոս, Յով-
հաննէս եւ ուրիշներ իրենց ձերացած տարիքին
հոգեւոր բացառիկ զօրութեամբ լեցուած կ'երևին:

ՍԵՊՏ. 22.—

ՅԱԿՈԲՈՍ, ՄԵԾ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՌԱՋՆՈՐԴ
ՄԸ

Դաս Յակ. Ա. 1-17

Կարգալ Մատթ. Դ. 1-11

Ոմանք Յակոբոս եօթօր թուղթը հոգեւոր
դեղարանի մը նմանցուցած են, ուր շատ մը հո-
գեւոր ախտերու համար կարճ, կարճ դեղագիրք

ներ կան: Այս առաքեալին Քրիստոսի եկեղեցիին վրայ կատարած դերը կարծուածէն շատ աւելի մեծ է: Բարեկարգութենէ ծնած եկեղեցիներ պապական եկեղեցւոյ սխալներուն կուրծք տալու համար ալ աւելի Պօղոս առաքեալի թուղթերուն փարեցան եւ շատ ցաւալի է ըսել որ շատեր այսօր «շնորհք»ը ծուլութեան բարձ մը կ'ընեն եւ փրկուած բայց մարմնաւոր եւ անսուրբ կեանք մը կ'ապրին: Թերեւս ոչ մէկ ժամանակ բողոքական եկեղեցիները այնչափ ստիպողական պէտքը չեն ունեցած Յակոբոսի թուղթին, որքան պէտք ունին այս օրերուն:

Մեր դասը մանաւանդ փորձութեան վրայ շեշտելուն, կարգ մը փորձութիւններուն դէմ Աստուծոյ խօսքէն, Հոգիին սուրէն հարուածներ տալու համար հետեւեալ համարները կարդանք:

- Հպարտութեան դէմ՝ Յակ. Դ. 6:
Բարկութեան դէմ՝ Եփես. Դ. 31:
Աշխարհասիրութեան դէմ՝ Ա. Յովհ. Բ. 15:
Բարձրամտութեան դէմ՝ Յակ. Դ. 10:
Ծուլութեան դէմ՝ Կող. Գ. 23: Հռով. ԺԲ. 14:
Անհնազանդութեան դէմ՝ Կող. Գ. 20:
Սուտի դէմ՝ Կող. Գ. 9:
Անպատուութեան դէմ՝ Հռով. ԺԲ. 17:
Խստութեան դէմ՝ Եփես. Դ. 32:
Անձնասիրութեան դէմ՝ Փիլ. Բ. 3, 4:
Հոգ ընելու դէմ՝ Փիլ. Դ. 6:
Անմաքուր խորհուրդի դէմ՝ Փիլ. Դ. 8:

ՍԵՊՏ. 29.—

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՇՄԻՐՈՎ ԼԵՑՈՒԱԾ ՀՈՎԻԻԸ

Դաս Գ. Յովհ.

Կարգաւ Ա. Յովհ. Դ. 7-21

Թէեւ մեր դասին նիւթը Յովհաննէս առաքեալի սիրոյ հոգւութիւնն է, բայց Գ. Թուղթ Յովհաննէս թղթակիցը Գալիոս ալ մեզի մասնաւոր դասեր ունի սորվեցնելիք, իր՝ առողջ հոգիով, ճշմարտութեան մէջ քալող կեանքով, իր հաւատարմութեամբ, հիւրասիրութեամբ, առատաձեռնութեամբ, մէկ խօսքով Աստուածամհանոյ կեանքով, հ. 3: «Շատ ուրախացալ»: Գալիոսի կեանքը գործնականացումն է Երբ. ԺԳ. 1: Ի «խնդութեան»: «Արդարին հայրը շատ պիտի ցնծայ» (Առակ. ԻԳ. 24): Որքան աւելի հոգեւոր հայրը Ա. Կոր. Դ. 15:

Գալիոսի հակապատկերն է Դիոտրեփէս: Այսօր ալ շատ են Դիոտրեփէսները, միայն սատարբերութեամբ որ Դիոտրեփէս Աստուծոյ խօսքին մէջ դիմակադերձ ըլլալուն՝ այսօրուան Դի-

ոտրեփէսները աւելի վարպետօրէն (երբեմն նոյնիսկ անգիտակցաբար կամ տգիտաբար ինքզինքնին խաբելով) դիմակաւորուած են աւելի հոգեւոր դիմակով մը «խմաստութեան կերպարանքով մը, ինքնակամ կրօնքով մը ու խոնարհութիւնով եւ մարմնի չխնայելով» (Կող. Բ. 23):

Սիրոյ առաքեալին սէրը ի յայտ կուգայ այս թղթոյն մէջ իր բոլոր քաղցրութեամբ, ինչպէս նաեւ իր բոլոր խստութեամբ: Անիկա ճշմարիտ գաւակն է իր Աստուծոյն որ սէր է եւ որ Իր սիրովը կը վարձատրէ (Մատթ. ԻԵ. 21) եւ կը յանդիմանէ (Սուփ. Գ. 17, ֆրանս. եւ անգլ.) եւ կը պատժէ (Հռով. Բ. 6-11): Աստուծոյ սիրոյն պատգամաբերը պարտի ըլլալ «Երուսաղէմի պէս հա. ֆելի» բայց նաեւ «զրօշակիւր զօրքերու պէս ա. հարկու» (Երգոց 2. 4 եւ 10): Հոս տեղն է ըսելու նաեւ թէ առաքեալը ամենէն պեղեցիկ նմոյշ մը կուտայ նամակագրութեան: Հաւատացեալներս շատ անգամ կը գրենք նամակներ, որոնց կէսէն աւելին, եթէ ոչ ամբողջը, լեցուած են այնպիսի խօսքերով եւ նիւթերով, որոնց համար Տէրը պիտի ըսէր, «25» որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն» (Մատթ. Ե. 46, 47, կամ 2. 32):

Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՌԷՍԼԻ

Մինչև հիմա Մեթոտականութենէ աւելի ճան Ուէսլիի վրայով խօսեցանք: Դիւաւոր պատճառը որ է որ ճան Ուէսլիի կեանքը զրեթէ մարմնացումն է Մեթոտական եկեղեցւոյ սկզբնական պատմութեան, եւ եթէ անոր մահէն յետոյ իր հիմնած եկեղեցին չանհետացաւ իրեն հետ, պատճառը այն է որ Ուէսլի 1727ին Օքսֆորտի մէջ Սուրբ Քիւլպին սկսեւ լին մինչև 1761ին իր մահը, իր հիմնած եկեղեցիին կողքին ապրեցաւ 64 երկար տարիներ, տեսաւ ու զրեթէ իրեն հետ մեծացուց 2 նոր սերունդներ: Իր մեռած ատեն միայն Անգլիոյ մէջ 79000 մեթոտական անդամներ կային 312 քարոզիչներով:

Ուրիշ պատճառ մ'ալ անշուշտ իր կազմակերպչի շատ ազդեցիկ եւ զօրաւոր անձնաւորու-

թիւնն էր, որուն ազգեցութիւնը իր մահուանէն ալ շատ տարիներ յետոյ դեռ կ'զգացուէր ու դեռ կ'զգացուի «մինչեւ այսօր» (Բ. Մնաց. ԼԵ. 25):

Վերջապէս երբորդ պատճառ մըն ալ կարելի է նկատել այն ներքին անհամաձայնութիւնները, որոնք Ճան Ուէսլիին նախ Մորաւեաններէն եւ յետոյ Հուայթֆիլտէ քաշուել ստիպեցին: Այս դժուարութիւնները թէեւ իրենց ժամանակին մահացու հարուածներ ըլլալ կը թուէին ԺԸ. դարու արթնութեան, բայց «ամէն բաները բարիի գործակից եղան» «այն օրերը երկրի մէջ եղած հրականերուն» Կոմս Յինցընտորֆի, Ճօրճ Հուայթֆիլտի Զարլզ եւ Ճան Ուէսլիի համար, որոնք թէեւ ներքին եւ անհատական վարդապետական համոզումներով իրարու հետ գտնուեցան ու զատուեցան (Գ. Առաք. ԺԵ. 39) բայց որոնց մէջ Աստուծոյ սիրոյն կրակը այրեց վերջապէս ուրիշ ամէն բան եւ տիրապետեց: Անմահ հոգիներու փրկութեան այսպէս, անմարելի կրակը աւելի եւ աւելի բորբոքեցաւ սուրբ լափիլիզող բոցով մը ու չմարեցաւ նոյնիսկ իրենց մահուան հետ:

Մեթոտական եկեղեցւոյ պատմութեան այս էջերէն կարօտ են օգտուել (թերեւս ամէն ատենէ աւելի) մեր օրերու եկեղեցիները եւ մենք պարտք կը համարինք համառօտ տեղեկացնել «Բանբեր»ի սիրելի ընթերցողները նաեւ այս կէտերուն վրայ:

Բ. Բաթամուլմ Մորաւեաններէն— Մորաւեանները երկու Ուէսլի եղբայրներուն հոգեւոր հայրերը եղան: Մեթոտականութիւնը Մորաւեաններէն առաւ հաւատքով արդարութիւնը եւ եկեղեցական կազմակերպութիւնը, որոնք իր հիմերը կազմեցին: Արդարեւ իր սկզբնաւորութեան մէջ մեթոտական եկեղեցին մորաւեան ընկերութիւն մըն էր:

Այս գործակցութիւնը կարելի չէր երկար տեւել նախ որ գերմանական միսթիք նկարագիրը շատ չէր յարմարեր Անգլիական գործնական ներկայագրին: Իսկ բաժանման պատճառ եղաւ Մօլթըր անունով մորաւեան եղբայր մը որ Լոնտոնի մորաւեան ընկերութեան մէջ մտցուց «Ճշմարիտ հանդարտութիւն» յորջորջուած վարդապետութիւն մը, ըստ որում հաւատացեալը կ'արդարանայ հաւատքի մէկ աստիճանով որ զինքը մէկէն ի մէկ կատարեալ կ'ընէ: Թէ հաւատքի մէջ ածիլ չըլլար եւ թէ այս տեսակի հաւատքը ստանալու համար հարկ ալ չկայ աղօթելու ոչ Ս. Դիրք կարգալու, հապա միայն հանդարտութեամբ սպասելու: Զարլզ Ուէսլի այս վարդապետութիւնը «Մեռեալ ծով»ի վարդապետութիւն

կը կոչէ: Ճան Ուէսլի ի զուր պայքարեցաւ եղբայրներուն այս սխալ վարդապետութեանը դէմ: Մօլթըր վերջապէս անոր արգիլեց ժողովի մէջ խօսիլ: 1770 Յուլիս 20ին Ճան Ուէսլի վերջին անգամը ըլլալով անոնց ժողովին մէջ յայտարարեց: «Ձեզ երկար ատեն կրեցի յուսալով թէ կ'առողջանաք, բայց քանի որ ձեր սխալներուն մէջ յարատեւել կ'ուզէք՝ ինծի կը փնայ միայն ձեզ Աստուծոյ յանձնել: Անոնք որ ինծի համամիտ են թող ետեւէս գան»: 18-19 հոգիներ միայն անոր հետ դուրս ելան եւ յաջորդ օրը 75 հոգինոց զատ ընկերութիւն մը կազմուեցաւ Ուէսլիի ձեռքին տակ: Ոչ Պէօլէր եւ ոչ Իսկ Յինցէնտորֆ յաջողեցան կրկին դանոնք միացնել: Այս վերջինը 1741ի Սեպտ.ին Ուէսլիի հետ անհատական տեսակցութիւն մը ունեցաւ, որուն հետեւանքը միութեան համար նուազ օգտակար եղաւ:

Զմոռնանք ըսելու որ այս բաժանումին փաստը Մեթոտական եկեղեցիին համար միայն ժամանակաւոր եղաւ: 3 տարի յետոյ միայն Լոնտոնի մէջ Մեթոտականները ունէին 1950 անդամներ, իսկ Մորաւեանները միայն 72: Մօլթըրի սխալները քիչ ժամանակ յետոյ արդէն այսպիսովեցան Մորաւեան եղբայրներու կողմէն ալ: Իսկ Յինցէնտորֆ միջակ քրիստոնեայէ մը աւելի էր եւ չկրցաւ Ուէսլիի հանդէպ իր սրտին մէջ դառնութիւն կրել: Յետագային նա հրատարակութեան մը մէջ հրապարակաւ ներողութիւն խնդրեց Ուէսլիէ, զայն դատապարտած ըլլալուն համար:

Բ. Բաթամուլմ Հուայթֆիլտէ— Այս բաժանումը աւելի ցաւալի երեւոյթ ունէր քանոյի Հուայթֆիլտ եւ Ուէսլի սրտի շատ սերտ միութիւն ունէին մօտ 15 տարիէ ի վեր: Անոնք միասին ուսանած, միասին ներքին պայքարներ ունեցած, միասին աղօթած, միասին սկսած էին Մեթոտական ընկերակցութիւնը, միասին հալածուած եւ միասին յաջողած էին: Անոնց մէջ բարեկամական այնպիսի կապ մը կար որ վարդապետական սեւէ վէճ կարելի չէր խանգարել: Ուստի այս բաժանումը թէեւ առ երեւոյթ իրենց երկուքին միջեւ եղաւ, այսու ամենայնիւ իր արմատին մէջ Մեթոտական եկեղեցւոյն յարող անդամներու մէջ զանգուածային 2 տարբեր ըմբռնումներ էին որոնք Ս. Օգոստինոսի օրերէն ի վեր ամեմտեան աստուածաբանութեան ուղղադաշտը եղած էին: Անգլիոյ մէջ այս 2 հոսանքները միշտ գոյութիւն ունեցած էին զօրաւոր կերպով, մանաւանդ բարեկարգութեան ի վեր: Նախասահմանութեան և ազատ կամքով փրկութեան վարդապետութիւնները: Հուայթֆիլտ նախասահմանութեան ախոյ-

եան պաշտպանն էր, իսկ Ուէսլի ազատ կամքով փրկութեան: Ի սկզբան վէճը անհատական հանդամանք ունեցաւ եւ կ'սպառնար արթնութիւնը խափանել իր փառաւոր սկզբնաւորութեան մէջ: Ուէսլի հրատարակեց «Ձրի շնորհք» վերնագրով քարոզ մը՝ որուն Հուայթֆիլտ նամակով մը պատասխանեց: Հուայթֆիլտի համախոհ եղողներ առանց անոր հաւանութիւնը առնելու այս նամակը տակել տալով գայն իբր թողութիւն ցրուեցին: Մտիկ ընենք Ուէսլիի օրագրութիւնը:

1741 Փետ. 1.— Մը. Հուայթֆիլտի կողմէ ինծի գրուած անհատական նամակ մը առանց ո՛չ անոր եւ ո՛չ ալ իմ թոյլտուութեանս տպած ըլլալով, անոնցմէ բազմաթիւ օրինակներ ցրուած էին մեր ժողովուրդին թէ ժողովարանին գուռը եւ թէ ներսը: Անոնցմէ մէկ օրինակ ձեռք անցնելով քարոզէն յետոյ ժողովուրդին պատմեցի իրողութիւնը ինչպէս որ էր: Յետոյ ըսի, «Հիմա պիտի ընեմ այն ինչ որ վստահ եմ Մը. Հուայթֆիլտ ինքը պիտի ընէր եթէ հոս ըլլար»: Անկէ յետոյ թողութիւնը անոնց ամենուն առջեւ պատուեցի: Ամէն անոնք որ անկէ ստացած էին՝ իմ օրինակիս հետեւեցան, այնպէս որ երկու վայրկեանէն մէկ թերթ իսկ չմնաց:

Մարտ 28.— Ծօրճիայէն վերադառնալէն ի վեր Մը. Հուայթֆիլտի անբարեհաճ վարմունքը լըսելով՝ ես իր քով գացի որպէսզի իրեն համար իր բերնէն լսեմ ու զիսնամ թէ ինչպէս դատելու եմ: Իր անկեղծ խօսակցութիւնը շատ գնահատեցի: Ինչ ըսաւ թէ ինքը եւ ես երկու տարբեր աւետարաններ կը քարոզենք, եւ ուստի ինք ոչ միայն ինծի պիտի չմիանար եւ ալ ձեռքը պիտի չտար ի նշան հաղորդակցութեան՝ հապա որոշած էր ամէն ուր որ խօսէր, հրապարակաւ ինծի եւ եղբորս դէմ քարոզել:

Վերջապէս անխուսափելի բաժանումը տեղի ունեցաւ «եւ» կ'ըսէ Ուէսլի, «անկից յետոյ 2 տեւոակ Մեթոտական եկեղեցիներ զոյսթիւն ունեցան, «անոնք որ տիեզերական ազատ կամքի փրկութեան կը հաւատային անոնք որ կը հաւատային թէ փրկութիւնը սահմանափակուած է»: Բայց եւ այնպէս արթնութիւնը շարունակեց այս անգամ փոխանակ մէկի, երկու կազմակերպութեանց միջոցաւ, որոնց համար բաժանումը գոնէ սա բարի հետեւանքը ունեցաւ որ անոնք այլիս ներքին զժառթիւններ չունեցան:

Հոս տեղն է յիշել թէ Հուայթֆիլտի կալվի-նականութիւնը իր քարոզներուն մէջ շատ քիչ տեղ բռնած կ'երևի: Իր պաշտօնէութեան սկզբնաւորութեանը հրատարակած քարոզներուն մէջ

նախասահմանութեան, ընտրութեան եւայլն խօսք չկայ. եւ եթէ նա այս վարդապետութիւնները իր յետագայի քարոզներուն մէջ կը յիշէ, այն ալ կ'ընէ քիչ անգամներ եւ առանց դառնութեան: Հուայթֆիլտի կալվիականութիւնը բնաւ գայն բոլոր մեղաւորները փրկութեան հրաւիրելէ եւ փրկող սիրոյն տիեզերականութիւնը հռչակելէ չարգիլեց: Ասիկա թերեւս տկար կ'երևի, բայց կը ծառայէ միայն փաստելու թէ Հուայթֆիլտի սիրտը աւելի բարձր էր քան իր վարդապետական հաւատամքը: Ահաւասիկ օրինակ մը այն հոգեյոյզ կոչերէն որոնք երբեմն նոյնիսկ յրաբորբոք կ'երևին, բայց հոգիէ հոգի կը թափանցէին եւ կ'ստիպէին մեղաւորները Աստուծոյ հետ հաշտուիլ:

«Երբ Յովսէփ Փարաւոնին պալատը տարուելու համար բանտէն հանուեցաւ, գրուած է թէ անոր հանգերձները փոխեցին: Բայց դուք իմ բարեկամներս, Աստուծոյ եկէք ձեր բանտարկեալի հագուստներովը: Եկէք, աղքատներ, թշուառներ, կոյր եւ մերկ եղողներ ինչպէս որ էք եւ Աստուած ձեզ պիտի ընդունի զրկաբաց անառակ որդիին նման: Ո՛հ, թող երկինքի մէջ ուրախութիւն ըլլայ ձեզմէ մէկին համար որ պիտի ապաշխարէ: Թող մի տաք որ իմ Վարդապետիս վերադառնալու ըսեմ, «Տէր, անոնք կը մերժեն հաւատալ իմ պատգամին»: Ո՛հ, հաւատացէք ինծի, ես պատրաստ եմ ձեզի համար բանտ երթալու ալ, մեռնելու ալ, բայց չեմ ուզեր առանց ձեզի երկինք երթալ: Քրիստոսի սէրը կ'ստիպէ զիս իմ ձայն փողի պէս բարձրացնել: Իմ սիրտս լիցուած է, եւ սիրոյն առատութենէն է որ բերանս կը խօսի ձեր անմահ հոգիներուն համար: Ինչո՞ւ ձեզմէ ունէ մէկուն համար պիտի յուսահատիմ: Ո՛չ, ես ոչ ոքի համար չեմ կրնար յուսահատիլ երբ զիս տեւ թէ Յիսուս Քրիստոս ինչ նման թշուառականի մը ողորմեցաւ: Դուք ձեր մասին ինչ գաղափար որ ալ ունենաք, ես զիսեմ թէ բնութեամբ ես կէս դեւ եմ եւ կէս վայրենի: Քրիստոսի ձրի շնորհքը զիս կանխեց եւ ազդարարեց: Նա զիս իմ արեւնիս մէջ պատկած տեսաւ իմ քովէն անցաւ եւ ինծի «ապրէ» ըսաւ: Եւ այն շնորհքը որ ինծի բաւեց, ձեզի ալ կը բաւէ: Ուրեմն եկէք, իմ յանցաւոր եղբայրներս, եկէք եւ հաւատացէք ձեզ իր թանկագին արիւնովը ծախու առնող Տէրոջ: Հաւատքով վեր նայեցէք եւ տեսէք զԱսիկա որ խոցեցիք: Տեսէք զԱյն արիւնշուայ, հոգեւորք, մեռնելու վրայ: Նայեցէք Անոր որ իր բազուկները տարածած պատրաստ է ընդունիլ ձեզ ամէնդ ալ»:

Ու վերջապէս պարտինք այս զլուրը գոցել այնպէս ինչպէս գոցուեցաւ նաեւ Հուլիսի տիկին եւ Ուէսլիի միջեւ: Անոնք երկուքն ալ շատ չանցած իրարու եղբայրական ձեռք կարկառեցին: Ու թէեւ բաժանումը բաժանում մնաց, բայց անոնց գործակցութիւնը ու մանաւանդ սէրը երբեմն նոյնիսկ իրարու եկեղեցիներուն մէջ քարոզելու չափ եւ աւելի մտերիմ եղան: Այս կէտը իր աւելի բարձր արժէքովը կարենալ ներկայացնելու համար, պարտք կը համարինք ժամանազրական կարգը տեղափոխելու որպէսզի հոս արտատրպենք Հուլիսի տիկին մէկ նամակը ճան Ուէսլիի ուղղուած 1755 Դեկ. 3ին, երբ նա ծանր հիւանդութեամբ պառկած էր եւ ինք իրմէ ու ամենուն կողմէ մահուան մօտեցած կը նկատուէր: (Ուէսլի այս առթիւ նոյնիսկ իր տապաւնաքարի արձանագրութիւնը պատրաստեց, բայց Աստուած հաճեցաւ զայն առողջացնել եւ անոր կեանքին աւելցնել մօտ 38 տարիներ եւս): Հուլիսի տիկին կը գրէր, «Քու մօտակայ մահուանդ լուրը եւ տեսիլը զիս բոլորովին սահմակեցուցին: Ես կը խղճամ ինքզինքս վրայ եւ կը խղճամ եկեղեցիին վրայ, բայց քու վրադ չեմ ցաւիր: Քեզի կ'սպասէ փառաւոր զահ մը, եւ քիչ մը ատենէն դուն քու Տէրոջ ուրախութեան մէջ պիտի մտնես: Նա հոն պատրաստ կը կենայ շողշողուն թագ մը իր ձեռքերուն մէջ զոր քու զլխուդ վրայ պիտի դնէ սուրբերուն ու հրեշտակաց յուզեալ ժողովին մէջ: Բայց ես խեղճ արարածս որ 19 տարիներէ ի վեր իմ երկնաւոր կեանքէս ազատուելուն կ'սպասեմ, ես պարտիմ քեզմէ յետոյ վարը մնալ դեռ հոս հեծելու համար: Ինչ որ ալ ըլլայ զիս միջիմարող խորհուրդը այն է թէ Աստուծոյ կառքերը շատ պիտի չուշանան զալ զիս ես տանելու թէպէտ ես շատ անարժան եմ: Ո՞հ, եթէ մեր աղօթքները կարենային այդ կառքերուն զալը յետաձգել, դուն մեզմէ պիտի չմեկնիր, իսկ եթէ վճիռը արդէն տրուած է, եթէ դուն պարտիս հիմա Յիսուսով ննջել, թող նա քու հոգիդ ողջագործէ եւ տայ քեզի Աստուածային սիրոյ պինդ զիրկնդ խառնումին մէջ մեռնիլ: Կը յուսամ զալ շաբթուն զալ եւ քեզմէ հրաժեշտ առնել եթէ դուն տակաւին այս մահապարտներու աշխարհին մէջ ըլլաս: Եթէ ոչ, վերապատուելի եւ շատ սիրելի Տէր, երթաք բարի, իմ սիրտս չափէն աւելի յուզուած է, արցունքներս կը վազեն չափազանց առատութեամբ եւ կը վախճամ թէ դուն ինքդ շատ տկար ըլլաս անկէ աւելի խօսքերու զմանալու: Քրիստոսի յաւիտենական բազուկները թող զրկեն քեզ»:

Այսպէս, հակառակ իրենց վարդապետական տարբեր համոզումներուն, քրիստոնէական եղբայրութիւնը կրկին տիրեց Տէրոջը այս երկու ընտրեալներուն միջեւ. եւ երբ 16 տարիներ յետոյ Հուլիսի տիկին մեռաւ Սմերթկայի մէջ, Ուէսլի սիրալիր յուզումով մը ընդունեց այն լուրը թէ իր բարեկամին վերջին կտակներէն մին եղած էր Ուէսլիէ խնդրել որ նա իր յուղարկաւորութիւնը կատարէ եւ զամբանականը կարդայ: Ուէսլի կատարեց Հուլիսի տիկին այս փափաքը, անոր ձեռքով կառուցուած եկեղեցիին մէջ:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԿԱՊԱՐԷ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

○○○○○ ○ ○○○○○

Օր մը, Լոնտոնի փողոցներէն մէկուն մէջ խեղճ աղեկ մը կառքին տակ մնաց եւ մարած վիճակի մէջ հիւանդանոց փոխադրուեցաւ:

Այս դժբախդ աղեկը մինչեւ այդ տարիքը անհատաւորութեան թշուառ կեանք մը անցուցած էր: Հօրմէն եւ մօրմէն որք՝ կը բնակէր ալքոլամոլ եւ զաժանաբարոյ կնոջ մը քով, որ զայն ամէն օր մուրալու կը զրկէր եւ եթէ պարապ ձեռքով վերադառնար, սաստիկ կը ծեծէր զանիկա:

Խեղճ աղեկը որպէս անկողին՝ աղատու լաթերով լեցուած տոպրակ մը միայն ունէր, զարշահուածութեամբ լեցուն խուցի մը մէջ: Անոր անունը կը բաղկանար հին հացի փշրանքներէ, ո՞վ գիտէ ուրկէ հաւաքուած, եւ քիչ մը անախորժ ապուրէ: Իր միակ հաճոյքն էր խանութներու ցուցափեղկերուն մէջ դրուած գեղեցիկ բաները դիտել: Անուշ կարկանդակներ, որոնցմէ իր կեանքին մէջ պիտի չուտէր բնաւ, ախորժահամ մը սեղէններ, հիանալի խաղալիքներ: Գիտէր որ այս բոլոր բաները իրեն համար չէին, քանի որ անոնց առջեւ ապակի դրուած էր: Վերջապէս հաշտուած էր այն զաղափարին հետ թէ իրեն միմիայն տեսնել թուլատրուած էր այդ հրաշալիքները եւ իր մտքէն անգամ չէր անցնէր թէ անոնք այդ թափանցիկ ապակիէն դուրս ալ գոյութիւն կրնային ունենալ իրեն համար:

Այդ բոլոր գեղեցիկ բաներուն մէջ մասնաւորապէս իր ուշադրութիւնը գրաւած էր կապարեայ զինուորներու տուփ մը: Ան բնաւ չէր յա-

զենար զայն դիտելէ եւ անոր ցանկանալէ: Որքա՛ն զուարճալի պիտի ըլլար զանոնք պատեարագոյի շարել: Բայց... ապակին կար առջեւը:

Օր մը, ուրեմն, կառք մը անոր մարմինին վերայէն անցաւ: Չինքը հիւանդանոց փոխադրեցին, հիւանդանոց մը, որ ինչպէս բոլոր այդ տնունը կրող հաստատութիւնները պէտք էր ըլլային, Յիսուս Բրիտոսի սիրոյն համար հիմնուած էր եւ կը կառավարուէր: Երբ տղան իր մարած վիճակէն սթափեցաւ, ինքզինքը գտաւ ճերմակ, փոքրիկ անկողինի մը մէջ եւ մաս-մաքուր: Սենեակը մեծ էր, հաճելի, եւ պատուհանները ծաղիկներով զարդարուած:

Քաղցր եւ նիրազէց զէմք մը իր վրայ ծռեցաւ աղուոր ժպիտով մը: Իրեն խմցուցին անուշահամ եւ զօրացուցիչ ապուր մը, որուն նմանը իր կեանքին մէջ չէր ճաշակած: Յետոյ վարադոյր մը տեղաւորուեցաւ լուսամուտին առջեւ արեւին պայծառ լոյսէն իր աչքերը պաշտպանելու համար եւ իրեն ըսին որ պէտք էր վերստին քնանալ փորձէր:

Տակաւին չէր կրնար հասկնալ թէ ինչ անցած դարձած էր, եւ թէ ինչպէս այդ գեղեցիկ սրահին մէջ կը գտնուէր: Երբեմն իրեն այնպէս կը թուէր թէ երկինքի մէջ էր եւ հրեշտակ դարձած: Կաշխատէր իր ձեռքերը ուսիրուն հասցընել եւ շօշափել տեսնելու համար թէ հոն փոքրիկ թռչող բռնակներ սկսած չէին արդէն. սակայն բան մը չէր գտնուիր, ամէն ինչ հանելուկ էր իրեն համար: Նաեւ իր զառանցանքի եւ ուժաթափութեան վիճակի մը մէջ գտնուելը թոյլ չէր տար իրեն պարագաներուն աւելի խորը թափանցելու:

Իր վէրքերը կաթմուածին չափ ալ լուրջ հանգամանք չունէին բարեբախտաբար: Իր ցաւերը քիչ քիչ մեղմացան, եւ խեղճ տղան շուտով ինկաւ խոր քունի մը մէջ որ տեւեց ամբողջ գիշերը:

Յաջորդ օրը տեսաւ որ իր սենեակի փոքրիկ ընկերներէն ոմանք կը խաղալին ձիերու, պատիկ կառքերու եւ փայտէ կենդանիներով լեցուն տուփերու հետ: Ան աչքէն չէր հեռացնէր զանոնք, եւ կը զարմանար որ անոնք իրենց ձեռքերով կը շօշափէին այդ բոլոր գեղեցիկ բաները:

Քիչ վերջ գինքն ալ նստեցուցին իր փոքրիկ անկողինին մէջ: Բարի հիւանդապահօհին բարձեր գետեղեց իր կոնակին, տախտակ մը դրաւ իր առջեւ, յետոյ բերաւ — հազիւ թէ կը հաւատար իր աչքերուն — զինուորներու տուփ մը, ճիշդ անոնց պէս որ այնքան յաճախ դիտա-

էր խաղալիքներու վաճառատան ցուցափեղկին մէջ:

Տղեկը մի քանի վայրկեան հետաքրքրութեամբ դիտեց զանոնք, յետոյ կամաց կամաց, զրեթէ վախով, իր ձեռքերը երկնցուց դէպի զինուորները: Այն վայրկեանին որ իր վախկոտ մատները անոնց դպան, ուրախութեան աղաղակ մը արձակեց եւ ըսաւ, «Ո՛հ, բայց առջեւը բնաւ ապակի չկայ»:

Սիրելի փոքրիկ բարեկամներս, դուք ալ այս որբ տղեկին դիրքը ունեցած չէ՞ք արդեօք այն վայրկեաններուն, երբ ձեր սիրելի մօր ծունկերուն վրայ եւ կամ կիրակնօրեայ դպրոցին մէջ մտիկ ըրած էք մեր երկնաւոր բնակարաններուն մասին այն հրաշալի պատմութիւնները, երեւակայած էք երկինքի հրեշտակները, այն տեղի փառքը, ձեզի համար պատրաստուած վարձատրութիւնները, պսակները, թագերը, ուղած էք այս չար տշխարհէն յանկարծ փոխադրուիլ եւ բռնել առնել զանոնք, որովհետեւ անոնք ձեզի համար չեն արգիլուած, բայց ձեր եւ անոնց միջեւ ապակի մը գտած էք: Այդ ապակին մեր մարմինն է, որ երբ մէջտեղէն վերնայ, երբ գայն հոս ձգենք, պիտի կրնանք հասնիլ մեր յուսացած բաներուն:

Երբ մենք կը խորհինք մեր սիրելիներուն մասին, որոնք մեզմէ առաջ գացած են, զիտենք որ անոնք երջանիկ են Հօրը տան մէջ, բայց մենք անոնց երջանկութիւնը ապակիի մը մէջէն միայն կրնանք տեսնել, եւ այս ապակին երբեմն որքա՛ն անթափանց է, որքա՛ն մուլթ:

Ո՛հ, որքա՛ն լաւ պիտի ըլլայ այն ատեն երբ ոչինչ պիտի բաժնէ մեզ մեր Փրկչէն, եւ երբ զԱյն պիտի տեսնենք զէմ առ զէմ, ինչպէս որ է:

Որքան գեղեցիկ պիտի ըլլայ երբ Անոր քով պիտի գտնենք մեր սիրելիները որոնք հաւատքի մէջ մեռած են:

Ոչինչ, ոչինչ... ո՛չ մէկ ապակի առջեւը:

Յ. Բ.

Le Gerant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԼ—Հովիւ' (վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse
8 30 ին կիր. դասմեծերու. » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ
Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միշր, Ալօ, Պոլ
վար Օտո մանուկուր բնակարաններու մէջ

Շարաժամիչի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին ՍէնՅ Անժուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse
Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ռ. շր. ժամը 20ին Camp Victor Hugo

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ՝ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

ՍԷՆՑ ՄԱՐԿԻԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՐԹԱ.— Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ՔՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՌ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ. Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Պատ. Ի. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Աքրահամեան

2. Place de la Pareille

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ՔԱՐԻՉ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5°

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.— Քարոզիչ՝ Պր. Մ. Վէքիլեան

25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

1936ի «ԲԱՆՐԵՐ Ի ՕՐԱՅՈՅՅՈՒՆ»

Ուրախութեամբ կը ծանուցանենք «Բանրեր»ի ընթերցողներուն թէ այս տարի ալ մեզի կարելի ելաւ հրատարակել չորս տարիէ ի վեր շարունակ լոյս տեսնող «Հայ Ընտանիքին Օրացոյցը», որ ամէն կողմէ գնահատուած օգտաշատ ձեռնարկ մը եղած է: Ամէն կողմ «իրուած եւ հազար հինգ հարիւր բնակարաններու ճշմարիտ զարդը եղած է այն:

Այս օրացոյցը բոլոր սերիշ Հայկական օրացոյցներէն տարբեր է.

Ա. Ունի շքեղ Ս. գրական պատկերներ ամէն մէկ ամսւան համար, որոնք խիստ ներշնչող բնոյթ ունին: Անոնց մասին բացատրութիւններ եւ ներշնչումներ ալ տուած ենք իւրաքանչիւրին տակ:

Բ. Ունի ամէն օրուան համար կարճ խօսք մը Աստուծոյ պատգամէն, որ այդ օրուան մեր խորհրդածութեանց առանցքն ըլլալու կրնայ ծառայել:

Գ. Բոլոր կիր. դասի ուսուցիչներու եւ աշակերտաց համար անխուսափելի ընկեր մըն է այն, քանզի բոլոր կիր. դպրոցի դասերը ժամանակին ցոյց կուտայ.

Դ. կիր. դպրոցի ոսկեղէն համարներն ալ ջանացած ենք այս տարի գետեղել կիրակիէն մէկ օր առաջ, շաբաթ օրուան քառակուսիին մէջ, այնպէս որ աշակերտներ գէթ մէկ օր առաջ կարենան խորհրդածել կիր. դասի մասին:

Ե. Ջանացած ենք այս տարի եւս շատ մը լուսաւորչական եղբայրներու եւ քոյրերու փափաքն ալ լեցնել, անոնց ներկայացնելով Հայ առաք. եկեղեցւոյ կարեւորագոյն տօնական օրերը:

Անոնք որ մեր օրացոյցը կը ճանչնան, արդէն ժամանակին կրնան ապսպրել եւ պիտի ապսպրեն, քանզի իրենց ընտանիքին անհրաժեշտ բարեկամը եղած է այն:

Ուրիշներ որոնք դեռ տեսած չեն եւ կ'ուզեն անկէ օգտուիլ, գրեն սեզի զրկելով նաեւ անոր գինը որ է 7 ֆրք. կամ կէս տոլար:

Մեզի համար սրտի գոհունակութիւն մըն է եւ մեծ ուրախութիւն երբ կը յաջողինք այսպիսի օրհնութեան միջոց մը լոյս հանելու, այնպիսի ժամանակի մը մէջ երբ չարը կարծես բարձրագոյն իշխանութիւնը գրաւելու կ'սպառնայ:

Փառք Տէրոջը այս յաջողութեան համար: Կը մաղթենք որ անիկա մինչեւ հիմա եղածին պէս այս տարի ալ օրհնութիւն մը ըլլայ Ձեզի եւ Ձեր ընտանիքին:

Խմբ. «ԲԱՆՐԵՐ»ի